

# Չ Ա Ր Տ Ա Ձ

ՕՐԷՐԷԹ 3 ԱՐԱՐ

ԽՕՍԳ՝

ԼԷՕ ՇԹԱՅՆ ԵՒ ԵԷՆՊԱՀ ՊԷԼԼԱ

ԵՂԱՆԱԿ՝

ԷՄՄԵՐԻԻԽ ՔԱԼՄԱՆ

Քարգանիչ եւ Քեծիտօր

Ա Շ Ո Տ Մ Ա Տ Ա Ք Ե Ա Ն Ց

891.9922

ՏԻԱ

1923

Ա. անգամ ներկայացուած է 1923 Ս. Չառկի Բ.

օրը, Բերա, Բըթի Շանի թատրոնը:

ՈՆ 1668



Հրատարակութիւն ԿԱՎՈՒՕՇԻ

Ցպագրութիւն

Մ. ՏԷՐ ՍԱՀԱԿՍԱՆ

Կ. ՊՈԼԻՍ



*Handwritten signature or note in Armenian script, possibly 'Կրթական կենտրոն'.*

*Handwritten initials or mark.*

780- ՉԹԱՅ-66-1-1-1

Տօփ. Արթուր Մեղակեանի (1879-1957) դասարանի  
ՏԻԿ. Արթուր Կանապուկեանի կողմից ջանքերով և ֆ:

Քերտ, 23-4-1975

Մանուկ Տօփ

Տեղի խնդրով օրինապահ ըլլալ եւ առանց բարձրանիչէն բոլոր  
տուրիւն ստանալու չմեղակայացնել:

## Ա Ն Ձ Ի Ն Ք

Առաջին ներկայացման

ԼԷՈՒՐՈՒՏ ՄԱՐԻԱ ԻՇԽԱՆ ԼԻՔԷՐԹ-ՎԱՅԼԷՐՇԱՅՄ

Պ. Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

ԱՆՀԻԼԹ ԻՇԽԱՆՈՒՀԻ

(Անոր կինը)

ԷՏՎԻՆ ՌՕՆԱԼՏ

(Անոնց տղան)

ԷՕՄԷՐ ԱՅՏԸՆ ՊԷՑ

ԿՈՄՍՈՒՀԻ ՇԹԱՍԻ

(Անոնց զարմուհին)

ՕՐ. Թ. ԼԻԻՍԻ

ԿՈՄՍ ՊՕՆԻ ՔԱՆՑԻԱՆՈՒ Պ. Օ. ՊԻՆԷՄԷՃԵԱՆ

ՍԻԼՎԱ ՎԱՐԷՍՔՈՒ (Չարտաշի իշխանուհին)

ՕՐ. ԷՖՐԱԶ

ՋՕՐ. ՌՕՆՇՏՕՐՅ

ԷՕԳԷՆ (ԵԷՆՕ) (Մեծ սպայ, ժէնէրալին տղան)

Պ. Վ. ՊԱԼԸՔՃԵԱՆ

ՖԷՐԻ ՔԷՐԷՔԷՇ

Պ. Շ. ԳԱՐԱԳԱՇ

ՄԷՐՕ, ՅԷՐԷՆԵԻ, ԷՆՏՐԷՑ, ՎԻՀԱՏ (Հիծելազօր-

քի սպաներ)

Շանթանի յամախորդներ, երգչուհիներ, պարի ազջիկներ,

հրաւիրեալներ, սպասաւորներ, կարօտներ եւլն.



## Ա. ԱՐԱՐ

Վիեննայի մէջ, երգեցիկ սրճարան մը, քեմ,  
օթեակներ, սեղաններ, ելն.

### Տ Ե Ս Ի Լ Ա .

Սիլվա, Պօնի, Ֆէրի եւ երգեցիկ սրճարանի յա-  
ճախորդներ, աղջիկներ կառսօններ, ելն.

ԱՄԷՆՔԸ. — Պռավօ՛, Սիլվա, պռավօ!

ՍԻԼՎԱ. — Հօ՛, եա՛, հօ՛, եա՛,

Ես զաւակն եմ ժայռոտ սարերուն .

Հօ՛, եա, հօ՛, եա,

Բարձր լեռներուն այնտեղ հեռո՛ւն

Ուր կը ծաղկի սիրուն էտլվայս,

Ուր ծիւնը կայ մարգրտի պէս:

Հօ՛, հօ՛, հօ՛, հէյ,

Սիրտըս ուժգին կը բարախէ:

Մեզ նման աղջիկներու հետ չըլլար խաղ

Սիրոյ մէջ կ'ուզենք ըլլալ անկեղծ, ապ-

րիլ խաղաղ:

Եթէ կ'ուզես ժամանց յիմար

Գրտիր աղջիկ քեզ յարմար.

Եթէ կ'ուզես ինձ միայն

Սիրել մաքուր սիրով յաւիտեան,

Հոգիս սիրաբաղձ կուտամ անդարձ:

ԽՈՒՄԲ. — Օ՛, լա՛, լա՛, ծնած եմ այդպէս

Օ՛, լա՛, լա՛, ժայռերու պէս.

Մի համբոյր

Սիրաբոյր.

Ո՞վ կարենայ տաք համբոյր տալ՝

Ամուսինս է ան:

ԽՈՒՄԲ. — Պոսվօ՛, Սիլվա, Սիլվա:

ՊՕՆԻ. — Լոնցէ՛ք, դադրեցուցէ՛ք աղմուկը. անսննք Օրիորդ Սիլվան ի՞նչ պիտի ըսէ:

ՍԻԼՎԱ. — Յարգելի բարեկամներս, այս բաժանուժը ինձի համար մեծ վիշտ մըն է: Հոս անցուցած երջանիկ օրերս չպիտի մոռնամ. ամէնքս ալ ապրինք այս անուշ յիշատակով. երբ Ամերիկայէն վերադառնամ, նորէն հոս իրար կը գտնենք և հաճելի ժամեր կ'անցընենք: Միբելի բարեկամներս, առ այժմ ամէնքիդ ալ մնաք բարով: (Դուրս կ'ելլէ):

ՖԷՐԻ. — Ամէնքս ալ դիտենք որ հոս, Պուտարէշթի մէջ, երկու յաղթական կայ. մէկը կոմս Էսթէրհագի Միսիսը, իսկ միւսը՝ Ֆօլի-Գարրիսի Սիլվա վառէսըն:

ՊՕՆԻ. — Ի՞նչ ըսիր, ի՞նչ Միսիսը՞. գէշ համեմատութիւն է առիկա. Միսիսը, մատակ ձի մըն է. ձիարչաւնեբու մէջ կրնայ առաջնութիւն շահիլ. բայց Սիլվան, անիկա օւրիշ բան մըն է. անիկա կին մըն է, հրեշտակ մը, ա՛յնպիսի կին մըն է. հրեշտակ մը, այնպիսի կին մը, որուն ներսը դուրսը կին է. մայրը կին է. հօրաքոյրը կին է, մօրաքոյրը կին է, հայրը... չէ՛, բան... վերջապէս ամբողջ ցեղը կին է. Սիլվան, ա՛խ, Սիլվան այնպէս մէկն է որ... ի՞նչ կ'ըսէք. դուն ի՞նչ կ'ըսես, Ֆէրի՛:

ՖԷՐԻ. — Աստուած կ'ըսեմ:

ՄԷՐՕ. — Ամէնէն սիրունը, ամէնէն գրաւիչը:

ՍԷՐԷՆԻ. — Փափիկ, կլորիկ... շաքա՛ր, շաքա՛ր:

Ֆէրի.— Միւսներէն աւելի թարմ է, սս-  
տոտուն, նոր հրապարակ ինկած...

ՊՕՆԻ.— Տեսա՞ք, իրաւունք չունի՞մ. ուրիշ  
տեսակ բան մըն է:

Ֆէրի.— Ուրիշ տեսա՞կ. հա՛, հա՛, հա՛...  
է՛հ, սիրելի Պօնիֆոս, ժամանակին ես ալ ուրիշ  
տեսակ բան մըն էի, ամէնուն քնացած ատենը,  
եւ այս տեղերը կը թափառէի, ուրիշներուն գործի  
գացած միջոցին ես աղուօր աղուօր կը քնանայի.  
ամէնքը երբ իրենց պարտքերը կը վճարէին, եւ  
այստեղէն պարտքով կ'ելլէի:

ՊՕՆԻ.— Ատիկա պակասութի՞ւն մըն է, Ֆէ-  
րի՛, դուն միշտ բարի, լաւ մարդ մըն եւ եղած և  
այդպէս ալ պիտի մնաս, բայց երեսդ նայելու չէ՛:  
Աստուած ալ գիտէ որ դուն ութսուննոց ես:

Ֆէրի.— Ութսուննոցը դուն ես:

ՊՕՆԻ.— Ֆէրի՛, դուն իմ հոգի՞ս եւ թէ չէ:

Ֆէրի.— Բարեկամներս, շնորհակալ ըլլանք  
Պօնիին որ Սիլվան այս աստիճանին հասցուց.  
Սիլվան այս բարձրութեան հասցնողը Պօնին էր.  
ատիկա պզտիկ յաջողութիւն չէ՛:

ՊՕՆԻ.— Ի՞նչ կարծեցիք հապա, և մինակս,  
այո՛, Սիլվան եւ հասցուցի: Իմ շնորհիւս անուն  
չահեցաւ: Ըսէ՛ նայիմ, դուն իմ հոգի՞ս եւ թէ չէ:

ԿԱՌՍՕՆ.— Պարոն կո՛մս:

ՊՕՆԻ.— Պատրաստուէ՛ նայինք. քսան հո-  
գինոց սեղան պիտի պատրաստես. կը յիշե՞ս, անց-  
եալ տարի Պուքրէչէն ութը պարուհի եկած էր,  
դուն կը յիշե՞ս, Ֆէրի՛:

Ֆէրի.— Հարկաւ կը յիշեմ:

ՊՕՆԻ.— Այն օրուան պէս ժամանց մը կ'ու-

զեմ. սեղանները նոյն ձեւով պիտի դնես. ստուգ  
չամբանիւ, ճիշտ այն դիշերուան պէս :

ՊիշԱՐԻ.— Այս անսովոր պատրաստութիւնը  
ինչի՞ համար է :

ՖէՐԻ.— Ինչպէ՞ս, չհասկցա՞ք. Սիւլվայի հրա-  
ժեշտին առթիւ շքասեղան մը :

ՊիշԱՐԻ.— Իրաւ է. Սիւլվան պիտի կորաըն-  
ցընենք :

ՖէՐԻ.— Այո՛, երեք և քառասուն շոգեկառ-  
քով կ'երթայ Թրիէսթ, և անկէ «Աարիտ» շոգե-  
նաւով դէպի Ամերիկա :

ՊիշԱՐԻ.— Իշխանին վիճակը խղճալի է :

ՖէՐԻ.— Ճի՛շտ է. Էտվին Սիւլվան կը սիրէ  
խենդենալու չափ : Տեսնենք ի՞նչպէս պիտի հան-  
դուրսէ այս բաժանումին : անպատճառ կը մեռնի .

ՊՕՆԻ.— Անհող եղի՛ր, սիրելի՛ս, մինչև հի-  
մա սէրէ մեռնող եղած չէ : Ատիկա եթէ կարելի  
ըլլար՝ ձեր նուտատ ծառան մինչև հիմա յիսուն  
անգամ մեռած կ'ըլլար :

ՖէՐԻ.— Պօնի՛, իշխանը ո՛ւր է, ամէն գիշեր  
կանոնաւոր կերպով կուգար :

ՊՕՆԻ.— Նայէ՛, լու յիշեցի, Էտվինին համար  
հեռագիր մը կայ քովս, Աստուած փորձանքը չի  
տայ... նորէն վիճենայէն :

ՖէՐԻ.— Հօրմէն պիտի ըլլայ :

ՊՕՆԻ.— Կ'երևայ վիճենա կը կանչէ կոր :

ՖէՐԻ.— Հաւանական է որ Էտվինին և Սիւլ-  
վային յարաբերութեան տեղեակ է :

ՊՕՆԻ.— Այդ ի՞նչ խօսք է. Էտվինը ո՛ւր, Սիւլ-  
վային հետ յարաբերութիւն սուննալը ո՛ւր. կը  
զարմանամ խելքիդ : Դուն սաչափը գիտցիր որ  
Սիւլվան միայն մէկ պայմանով կարելի է ձեռք

ձգել : Սմուտնութիւն : Իսկ ա՛յդ ալ անկարելի է :

Ֆէրի.— Ինչո՞ւ կարելի չըլլայ :

ՊՕՆԻ.— Կ'երեւայ դուն անոր հայրը չես ճանչնար :

Ֆէրի.— Ատանկ բաներ միշտ պտտահած են :

ՊՕՆԻ.— Այո՛, պտտահած են . բայց ո՛չ գա-  
ֆէ-շանթանի աղջկան մը հետ . օրէրայի , օրէրէթի  
բրիմատոնայի մը կամ սուպրէթին հետ կարելի է .  
էտվիւնին ընտանիքը չես ճանչնար դուն . անոնք  
ձիւնին վրայ կը պտըտին՝ հեաքերնին ցոյց չեն  
տար : Ինծի նայէ՛, անոր հայրը . . .

Ֆէրի.— Ի՞նչ նշանակութիւն ունի . ատանկ-  
ներուն՝ ամառը էմբէրմէտպլով քնացողներ կ'ըսեն :

ՊՕՆԻ.— Ա՛խ, խոշոր տղա՛յ՛

Ֆէրի.— Տղայ, հէ՞ . գիտե՞ս, Պօնի , եթէ ես  
զաւակ մը ունենայի՝ կը յանձնարարէի որ, չէ՛ ,  
ի՞նչ յանձնարարել , կը պահանջէի որ իր գիշեր-  
ները գաֆէ-շանթաններուն մէջ անցընէ :

ՊՕՆԻ.— Շատ յիշ է . դարավերջիկ հայրու-  
թիւն :

Ֆէրի.— Քեզի բան մը ըսե՞մ . մարդ այս աշ-  
խարհին մէջ կրցածէն աւելի պէտք է խնդայ եւ  
զուարճանայ : Տե՛ս, ես եկայ եւ երթալու վրայ  
եմ . ինծի չափ շուայտ մարդ քիչ եղած է : Բայց  
սա ձերութեանս մէջ երբեմն կը յիշեմ երիտասար-  
դութիւնս եւ կը զարթանամ , այո՛ , պարզապէս կը  
զայրանամ , եւ տոյնքան գէշ կը զայրանամ որ . . .  
է՛հ , Ֆէրիս , կ'ըսեմ ես ինծի , ի՞նչ կ'ըլլար հիմա  
եթէ ազուարիկ աղջիկ մը . . .

ՊՕՆԻ.— Տէրի՛, ճիշտ բռէ՛, դուն հիմա հոգի՞ս  
ես թէ չէ: Ա՛խ, բարեկամներս, չէ՞ որ մենք այս  
հաճոյքներուն համար միայն կ'ապրինք:

ՏէՐԻ.— Այո՛, հաճոյք, կրներ...

[ Ե Ր Գ )

ՏէՐԻ.— Մենք այսպէս սորվեր ենք,  
եւ չենք ուղղուիր երբէք,  
եւ անկողին չեն կրնար մտնել կանուխ,

Յ ՊԱՐՈՆՆԵՐԸ.— Կանուխ, կանուխ, կանուխ:

ՏէՐԻ.— Փողոցի լոյսերը,  
Շանթանի կէս-կոյսերը  
Կ'առնեն մեր խելքը, եւ քունը կը փախչի:

Յ ՊԱՐ.— Փախչի, փախչի. փախչի:

ՊՕՆԻ.— Մենք այսպէս սորվեր ենք  
եւ չենք ուղղուիր երբէք,  
Ու կեանքը այսպէս ի գուր կը վատնենք:

Յ ՊԱՐ.— Վատնենք, վատնենք, վատնենք:

ՏէՐԻ.— Երգեր, պարեր եւ պախկներ,

ՊՕՆԻ.— Ծիծաղ, բրբիջ եւ աղջիկներ  
Ամէնքը մէկ  
Մութ գիշերները կը դարձնեն ցերեկ:

ՊՕՆԻ.— Բաժակները լի են միշտ:

ՏէՐԻ.— Մեր դէմքերուն չը կայ վիշտ:

ՊՕՆԻ.— Շէն շող կէս-կոյսեր զուարթերես

ՏէՐԻ-ՊՕՆԻ.— Կը շողշողան հոս աստղերու պէս:

ԱՄԷՆՔԸ.— Աղջիկներ, աղջիկներ շանթանի,  
Լաւ գիտէք կեանքը՝ դեռ պատանի,  
Անհո՛գ էք, անփոյթ էք շանթանի կոյսե՛ր,  
Գերի էք դարձուցեր չափահաս եւ ծեր:  
Աղջիկներ, աղջիկներ, աղջիկներ շանթանի

- Գիտէք դուք սիրել ծեր, պատանի,  
 Փոխել յանախ սէր, սիրահար,  
 Ու կեանքի բաժակը վատթար,  
 Մինչեւ վերջը, վերջը, վերջը կուլ տալ:  
 ՊՕՆԻ.— Կիները հուրիններ են,  
 Հուրի պէս մեզի կ'այրեն,  
 Եւ այդ կրակը մեզի կուտայ հաճոյք:  
 ՊԱՐ.— Հաճոյք, հաճոյք, հաճոյք:  
 ՊՕՆԻ.— Սիկառի ծուխերը  
 Կ'անիծեն մեր խերը,  
 Մենք հոս կ'ապրինք ծուխերու պէս թեթեւ,  
 Յ ՊԱՐ.— Թեթեւ, թեթեւ, թեթեւ:  
 ՖէՐԻ.— Պարերն ու շամբանիան  
 Մեզ ուրախ կեանք կուտան  
 Եւ ժամանակը այսպէս կ'անցնի արագ,  
 Յ ՊԱՐ.— Արագ, արագ, արագ:  
 ՊՕՆԻ.— Երգեր, պարեր եւ պաշիկներ ...  
 ՖէՐԻ.—

(Շարունակել մինչեւ վերջը)

Բ. ՏԵՍԻԼ

- Էտովին, Կառսօն, յետոյ՝ Պօնի  
 ԷՏՎԻՆ.— Ասիկա Օրթորդ Սիլվային տուէք:  
 Ո՛ւր է:  
 ԿԱՌՍՕՆ.— Իր սենեակն է: Կը հագուի:  
 (Կ'երթայ):  
 ՊՕՆԻ.— Վա՛յ, էտովին, ո՛ւր էիր. ըսէ՛, դուն  
 Իմ հագիս ես թէ չէ. բոլոր գիշերը ո՛ւր էիր:  
 ԷՏՎԻՆ.— Բիչ մը դօրծ ունէի:  
 ՊՕՆԻ.— Հեռագիր մը ունիս քովս:  
 ԷՏՎԻՆ.— Նորէ՞ն: ՎՍՐԳՆՈՒԿԻԻՆ հեռ յարա-

բերութիւնդ խզէ, շուտով եկուր: Կը քաճաքէի  
տեսնել ասէ հայրս ինչ պիտի ընէ:

ՊՕՆԻ.— Խեղճութիւն չուզեր, հայրդ մի՛ նե-  
ղացներ՝ տո՛ւն գնա:

ԷՏՎԻՆ.— Կարելի չէ:

ՊՕՆԻ.— Խելքդ գլուխդ հաւաքէ, աղա՛ս.  
Սիւլվան քանի մը ժամէն պիտի մեկնի:

ԷՏՎԻՆ.— Ո՛չ, չի կրնար երթալ:

ՊՕՆԻ.— Պիտի երթա՛յ, վճռակա՛ն է: Եւ  
միասին պիտի երթանք: Ինձի՛ նայէ, ես քենէ ա-  
ւելի փորձառու և խելացի եմ: Միտքէդ հանէ՛,  
Սիւլվային հետ չե՛ս կրնար... Ասկէ զատ, Սիւ-  
լվայէն ուրիշ կին չկա՛յ, աշխարհի վրայ: Ան-  
պատճառ Սիւլվա՞ն պէտք է:

ԷՏՎ.— Անպատճա՛ռ. ե՛ս Սիւլվայէն զատ ու-  
րիշ մէկը չեմ կրնար սիրել:

Տ Ե Ս Ի Լ Գ.

Անոնք, Սիւլվա

ՍԻԼ.— Դո՛ւն ես, Պօ՛նի, էտվինը կարծեցի:  
Ա՛, դո՛ւք էք իշխան, նամակնիդ վախցուց ինձի:

ՊՕՆԻ.— Կա՛մ ներս, կա՛մ դուրս, Սի՛լվա:

ՍԻԼ.— Այո՛, Պօնի: Էտվին, վերջին երեկոյ-  
թիս ինչ՞ու չեկար:

ԷՏՎ.— Չեկա՛յ՝ որովհետեւ չե՛մ ուզեր որ եր-  
թաս:

ՍԻԼ.— Բայց անկարելի՛ է ասիկա:

ԷՏՎ.— Ե՛ս ալ միտսին պիտի դամ:

ՍԻԼՎ.— Ո՛չ, ո՛չ, ասիկա չըլլար, չէ՞ Պօնի:

ՊՕՆԻ.— Ըսէ՛, էտվին, դո՛ւն իմ հոգի՛ն ես  
թէ չէ՛:

ԷՏՎ.—Անամօթ, սիրած կինս կը սիրես, կը համոզե՛ս և յետոյ առա՛նց կարմրելու կը հարցնես որ ես քու հոգի՞դ եմ թէ չէ:

ՊՕՆԻ.—Այո՛, ի՞նչ կարծեցիր հապա, սիրահար եմ, կը սիրե՛մ, պիտի սիրե՛մ, Սիլվան ճակատիդ չգրեցի՛ն կարծեմ: Ա՛, լա՛ւ յ՛շեցի, Օրիորդ Եուլիշքան անուշավաճառին ինձի՛ պիտի սպասէր, աչ մնացի. ըսէ՛, դու իմ հոգի՞ս ես թէ չէ: (Կ'երթայ):

ՍԻԼՎ.—Էտվին, աղայութիւն մի՛ ըներ, խեղացի եղիր:

ԷՏՎ.—Այո՛, խեղացի, քեզի համար ո՛րչափ դիւրին է: Սիլվա՛, դուն իրա՛ւ անսիրտ ես. դուն սա՛ չափ չես սիրեր ինձի:

ՍԻԼՎ.—Սա չափ ալ?

ԷՏՎ.—Բայց ես նորէն կը սիրեմ քեզի. երկու ամիս քեզմով ապրեցայ և միայն քեզմով կրնամ ապրիլ: Դի՛ւն ամէն բան մոռցար և...

ՍԻԼՎ.—Դո՛ւն ալ կը մոռնաս որ մը:

ԷՏՎ.—Երբէ՛ք:

ՊՕՆԻ.—(Մտնելով) Եուլիշքան չգտայ. Աստուած գիտէ, սա կիներուն սուտերէն զգուեցայ ա՛լ: Հոս եկա՛ւ:

ՍԻԼՎ.—Ո՛չ:

ՊՕՆԻ.—Ո՛ր է արդեօք: Ըսէ՛ք, դուք երկուքդ ալ իմ հոգի՞ս էք թէ չէք. հոգիս չէ՞ք... Է՛հ, երթամ փնտռեմ: (Կ'երթայ):

ԷՏՎ.—Այո՛, Սիլվա, դո՛ւն մոռցար:

ՍԻԼՎ.—Ո՛չ:

ԷՏՎ.—Սիլվա, խօսէ՛, Սիլվա:

ՍԻԼՎ.— Խնդրեմ, էտՎին, հանդարտէ՛ :

ԷՏՎ.— Ո՛չ, բռէ՛, ինձի կը սիրե՞ս, խօսէ՛

Սիւվա :

ՊՕՆԻ.— (Մտնելով) Գտա՛յ, գտա՛յ !

ԷՏՎ.— Ի՞նչ :

ՍԻԼՎ.— Ո՛վ :

ՊՕՆԻ.— Եււշիքաս : Բայց եթէ չէք ուզեր որ կորսնցնեմ իմ մինիսիկ բերանով, կարմիր-կարմիր շրթունքներով թանկագին Եււշիքաս, շաքարիս տուփը ինձի տուէք, շաքար չունենալուս համար նեղացաւ :

ԷՏՎ.— Հո՛ն է :

ՊՕՆԻ.— Շնորհակա՛լ եմ, շնորհակա՛լ եմ : Ըսէ՛ք, դուք իմ հոգի՞ս էք թէ չէք : (Կ'երթայ)

ԷՏՎ.— Քեզի կը սիրեմ, Սիւվա, դուն իմա ըլլալու ես :

ՍԻԼՎ.— Այդ ի՞նչ վիճակ է. էտՎին, ինչո՞ւ Պօնիէն օրինակ չես առներ, սւրա՛խ, դուա՛րթ եղի՛ր :

ԷՏՎ.— Չե՛մ կրնար : Սիւվա՛, պիտի չերթաս, չէ՛ :

ՍԻԼՎ.— ԷտՎի՛ն :

ԷՏՎ.— Սի՛ւվա :

ՍԻԼՎ.— Չը՛ւար, էտՎին, պէտք է երթամ, տսիկա մեր վերջին գիշերն է :

ԷՏՎ.— Սի՛ւվա :

ՍԻԼՎ.— ԷտՎի՛ն :

ԷՏՎ.— Մի՛ երթար, Սիւվա, ես տունց քեզի չեմ կրնար ապրիլ :

ՍԻԼՎ.— Կը սիրե՛մ քեզի, է՛տՎին :

( Ե Ր Գ )

ԷՏՎԻՆ. — Սիլվա՛, Սիլվա, իմ անուշ, քնքուշ  
հոգեակ:

Սիլվա՛, ա՛յնքան սիրեցի քեզ որ մոռցայ  
ամէն բան:

Մոռցայ՛ ինչ որ կար ինձ համար մինչեւ  
ճիմա սիրական:

Եկո՛ւր, Սիլվա, ինձ մի՛ թողուր, ես  
տոկալու երբէ՛ք կաորդ չեմ:

Կեանքս ու պատիւ զոհ տամ սիրոյդ՝  
Ինձ մի՛ թողուր, Սիլվա, ես կ'աղաչեմ:

ՍԻԼՎԱ. — Զը՛լար, էտվին, կարելի չէ՛, ես կերթամ  
անպատճառ:

ԷՏՎԻՆ. — Մի՛ երթար, սիրուն Սիլվա, կը մնամ  
ես անճար:

Դուն իմ միակ սէրս ու կեանքս ես եւ  
իմ հոգւոյս իղծն ես համակ

Առանց քեզի չեմ ապրիր, քաղցրիկ,  
սիրուն հրեշտակ,

Դուն իմ միակ սէրս ու կեանքս ես եւ  
իմ հոգւոյս իղծն ես համակ,

Մ'երթար, Սիլվա, դուն միակ արեւն  
ես իմ կեանքիս:

ՍԻԼՎԱ. — էտվին, քեզի ես կ'աղաչեմ ի զուր,  
այդպէս մի՛ պնդեր,

Չէտք է երթամ, եղիբ հանդարտ,  
մ'ըլար այդպէս անհամբեր.

Տղայ չես, էտվին, գիտցիր քեզի յար-  
մար ընկեր չեմ արդէն,

Գուն շատ բարձր ես իսկ ես ըստոր,  
ուսա՛ղ, հեռու ենք անհուկօրէն

ԷՏՎԻՆ. — Մ'երթար, Սիլվա, դուն միակ արեւն  
ես ի՞մ կեանքիս:

ՍԻԼՎԱ. — Էտվի՛ն, մ'ըլլար անողոք, ախրեցիր իմ  
կամքիս:

Դուն իմ միակ սէրս ու կեանքս ես, եւ  
իմ հոգւոյս իղծն ես համակ:

Առանց քեզի, չեմ ապրիր քաղցրիկ  
սիրուն հրեշտակ:

ՍԻԼՎԱ ( Դուն իմ միակ սէրս ու կեանքս ես, եւ  
ԷՏՎԻՆ ( իմ հոգւոյս իղծն ես համակ,

ԷՏՎԻՆ — Կեցի՛ր, սիրելիս, սիրախ տէրը դուն  
ես միայն:

ՍԻԼՎԱ. — Էտվի՛ն, սիրելիս, սիրախ տէրը դո՛ւն  
ես միայն:

(Գար)

(Կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Դ .

Պօնի եւ աղջիկներ

ՊՕՆԻ.— Եկէ՛ք զաւակներս, եկէ՛ք հրեշտակ-  
ներս, ըսէ՛ք նայիմ, դո՛ւք ալ իմ հագի՞ս էք  
թէ չէք:

ԵՈՒԼԻԾԹԱ.— Աս ի՞նչ սեղան է:

ՊՕՆԻ.— Հա՛, կը տեսնէ՞ք այս սեղանը. Սիլ-  
վայի հրաժեշտին առթիւ պատրաստուած է. բայց  
մինչեւ որ Սիլվան չգայ՝ ձեռք գպցնելը ար-  
դիւուած է:

ԵՈՒԼԻԾ.— Դայլի պէս անօթի եմ:

ՊՕՆԻ.— Ձէ՛, ձեռք դարնել չըլար:

ԱՂՋԻԿ ՄԸ.— Ինչո՞ւ, տա ի՞նչ ըսել է:

ՊՕՆԻ.— Ի՞նչ կ'ընէք, սեղանը չնօրէքէ պիտի  
կանէք, ասդին եկէք, ասդին, ձեզի անտուակներ,

եթէ մմէն բանի մէջ ալ առանկ անհամբեր ըլլաք՝  
մեր շատ մը գործերը կը դիւրանան :

ԵՈՒԼԻՇ.— Իմ տեղս ո՛ւր է :

ՊՕՆԻ.— Հա՛, տեսէ՛ք. հոս՝ Բրազիլի վարդը՝  
Միկի, հոս՝ Վիէննայի սոխակը՝ Ռից, հոս՝ Պարչէ-  
լօնի աստղը՝ Գլէօ, հոս՝ մեր ծիծեռնակը՝ Լիլի,  
հոս՝ արեւելքի աստղը՝ Շարի :

ԱՂՋԻԿ ՄԸ.— Այս գիշեր լաւ պիտի գրօնունք :

ԵՈՒԼԻՇ.— Իրաւ է, բայց ես բնաւ տրա-  
մադիր չեմ :

ԱՂՋԻԿ ՄԸ.— Ամէն գիշեր ըլլայ, տրամադիր եմ :

ՊՕՆԻ.— Ձեզի բան մը ըսե՛մ, աղջիկնե՛ր, հաւա-  
տացէ՛ք, ես այս կեանքէն զգուեցայ :

ԱՂՋԻԿՆԵՐ.— Թ՛օ

ՊՕՆԻ.— Ի՞նչ օ՛՛՛՛ յո՛՛՛, զգուեցայ, յօգնեցայ,  
ս'չ ասոր վերջը կա՛յ եւ ս'չ ալ տակը. ես այս  
կեանքէն հրաժարականս պիտի տամ :

ԱՂՋԻԿՆԵՐ.— Հա՛, հա՛, հա՛ :

ԱՂՋԻԿ ՄԸ.— Ապո՛ւշ :

ՊՕՆԻ.— Ապո՛ւշ. պիտի տեսնէ՛ք, և արդէն  
պէտք է որ քաշուիմ ալ այս շուայտութիւններէն,  
բաժնուիմ ձեռնէ, որովհետեւ...

ԱՂՋԻԿՆԵՐ.— Որովհետեւ ի՞նչ :

( Ե Ր Գ )

Ջո՛ւր է, իմ ծերուկ սիրտս արդէն ալ չի բորբոքիր  
Սէր, սիրական սիրտէս շատոնց են տարագիր.

Սառեր է հոգիս. ես չեմ ուզեր ա՛լ սիրամաշուք,  
Չէք կրնար ինձ կրակ տալ, հանգիստ կ'ուզեմ անշուք  
Սէրը արդէն վերջացաւ, կիրքն ալ անհետացաւ,

Մնա՛ք բարով, աղուորիկնե՛ր, ա՛լ չեմ ուզեք  
վիշտ ու ցաւ:

Բա՛յց, առանց կնոջ չապրիր խեղճ մարդը,  
Ինչպէս առանց արեւի խեղճ վարդը,  
Ուստի ես կ'ուզեմ կիներէն տաք տաք պաչիկ,  
շատ շատ պաչիկ

Աւա՛ղ, առանց կնոջ չապրիր խեղճ մարդը  
Ինչպէս առանց արեւի խեղճ վարդը .

Ուստի ես կ'ուզեմ համբոյր անոնց ունքէն,  
Աչքէն, այտերէն, կուրծքէն . շրթունքէն:

ԱՄԷՆՔԸ. — Աւա՛ղ, առանց կնոջ չապրիր խեղճ  
մարդը .

եւն. եւն. եւն.

(Մինչեւ վերջը)

(Պար եւ կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Ե.

Սիլվա, Պօնի, Ֆէրի, Էտվին, ամէնքը

ՍԻԼ. - Շատ ուրախ եմ որ քանի մը ժամ եւս  
պիտի կրնամ ձեզի հետ անցրնել. խմենք և խըն-  
դանք, պարենք, զուարճանանք խենդերու պէս,  
իսկ յ'ոոյ երբ մեկնելուս ժամը կը հասնի, այն  
առան բարեկամներուս կուտամ մեկնուով բարեւ  
մը, ժպիտ մը, մտերիմ խօսք մը, թերեւս... համ-  
բոյր մը, և կը մեկնիմ: Ինձի սիրողը՝ թո՛ղ շամ-  
բանիս մը տայ ինձի: Շնորհակալ եմ, իշխան:

ԱՄԷՆՔԸ. — Սիլվային համար:

ՍԻԼ. - Գեղեցիկ ապագային համար:

ԷՏՎ. - Անուշ ներկային համար:

Ֆէրի. - Արտակարգ անցեալին համար:

ՊՕՆԻ. — Վեհափառ առողջութեանս համար:

ԱՄԷՆՔԸ. — Հա՛, հա՛, հա՛, կեցցէ՛ Սիւլվան,

Ֆէրի. — Տղաքներս, եկէք թիչ ժըն ալ սը-  
րահը երթանք եւ պարենք:

ԱՄԷՆՔԸ. — Այո՛, այո՛, պար, պար:

ԵՈՒԼԻՇԻ. — Դուն ալ կուգաս, Սիւլվա, այն-  
պէս չէ՛:

ՍԻԼՎ. — Դուք գացէ՛ք. թիչ ետքը ես ալ  
կուգամ:

### Տ Ե Ս Ի Լ Զ.

Պօնի, Էտվին, Սիւլվա, Ֆէրի

ՍԻԼՎԱ. — Ա՛խ, մէկը չգիտեր թէ ի՞նչ կ'անցնի  
մտքէս, ես կ'ուզեմ լալ, լալ...

ԷՏՎԻՆ. — Սիւլվա՞: Պօնի, շամբանիա տուր:

ՊՕՆԻ. — Տղաս, պիտի գինովնաս:

ԷՏՎ. — Շամբանիա՛, Պօնի՛:

ՊՕՆԻ. — Առ խմէ՛, բայց Աստու սիրոյն,  
ըսէ՛ ինձի, դուն իմ հոգի՞ս ես թէ չէ՛:

ԷՏՎ. — Այո՛, այո՛, Պօնի, դուն ալ խմէ՛:

ՍԻԼՎ. — Պիտի խմենք, բայց սրո՞ւ համար:

Ֆէրի. — (Մտնելով) Բարեկամութեան հա-  
մար, դաւակնե՛րս:

ԷՏՎ. — Սիրոյ համար, կեցցէ՛ սէլը:

( Ե Ր Գ )

ՍԻԼՎ. — Ինչո՞ւ այլ տեղ փնտռել երջանկութիւնն  
անյատակ

Երբ ան բոյն է դրած այստեղ՝ մեր կուրծքերուն  
տակ,

Ուրտեղ որ կայ սէր՝ այնտեղ եւ երջանկութիւն  
կայ .

Երջանիկ է ան՝ որ իր մէջ ունի սէր ոսկեայ .

Այն որ ճաշակեր է սիրոյ կենսատու նեկտարէն ,

Որ ուրախ կեանքի բաժակէն է խմեր արդէն :

Կեանքը չարժեր երբ արդէն

Սէրը մարդու սիրտէն

Իսպառ եղած է անհետ ,

Նա մեռած է յաւէտ :

Սէ՛րն է , սէ՛րն է միայն կեանք :

Եւ հահելի տանջանք ,

Արեւ մըն է ոսկետառ .

Համով , հոտով նեկտար .

Ամէն մարդու մէջ սէր մը կայ՝

Որ անոր կեանք կուտայ ,

Ճակատագիրն է այդ մարդուն ,

Մի՛շտ անբաժան եւ արթուն :

Ա՛հ , ճակատագրէն մի՛ փախչիր՝

Կեանքն ալ չի փախչիր :

Սատանի կտոր մը մեր մէջը միշտ կ'ապրի ,

Սիրուն մարդկանց հմայքէն մեր սիրտը միշտ կ'այրի .

Մեր մէջը միշտ կ'ապրի կտոր մը սատանի ,

Եւ այսպէս կ'ապրին խեղճ աղջիկներ շանթանի :

**ՊՕՆԻ.** — Սատանի կտոր մը մեր մէջը միշտ  
կ'ապրի,

**ՖԷՐԻ.** Չքնաղ կանանց հմայքէն մեր  
**ԷՏՎ.** — սիրտը միշտ կ'այրի,

Մեր մէջը միշտ կ'ապրի կտոր մը սատանի,  
եւ այսպէս կ'ապրին սիրահարներ շանթանի:  
(Պար եւ կ'երթան)

### Տ Ե Ս Ի Լ Է.

Եէնօ, ծառայ, յետոյ՝ էտվին

**ԵԷՆՑ.** — Իշխանին իմացօցէք: Ի՛նչ գեղե-  
ցիկ, որք-՛ն փառաւոր միջավայր:

**ԷՏՎ.** — (Կլմ մտնէ) Դո՞ւն ես, Եէնօ, այս աս-  
տե՛ն ի՞նչ գործ ունիս հոս:

**ԵԷՆՑ.** — Անհո՛գ եղիր, բան չկայ:

**ԷՏՎ.** — Ե՛րբ եկար, շոգեկառքով եկար:

**ԵԷՆՑ.** — Օթոյով եկայ: Առ-՛ջ պանդոկը գա-  
ցի, ըսին որ հոս ես. արդէն վատահ էի որ քեզի  
միայն հոս պիտի կրնամ գտնել:

**ԷՏՎ.** — Ըսէ՛ տեսնենք, ինչո՞ւ եկար:

**ԵԷՆՑ.** — էտվի՛ն, վիեննա պիտի դառնաս,  
պէտք է:

**ԷՏՎԻՆ.** — վիեննա՞. հա՛, հա՞, հա՛...

**ԵԷՆՑ.** — Կ. բգա՛.

**ԷՏՎ.** — Կոչնագիր:

**ԵԷՆՑ.** — Լօնգէնի բանակատեղը պէտք է ներ-  
կայ ըլլաս. ժամը հիմա երկուքն է:

ԷՏՆ. — Այս ատեն ինչպէ՞ս կարելի է. շոգե-  
կառք ալ չկայ:

ԵԷՆՕ. — Օթօժօպիլս քու հրամանիդ կ'ըս-  
տասէ. պիտի երթանք:

ԷՏՎ. — Անպատճառ հօրս գործն է. բայց ես  
չպիտի դամ:

ԵԷՆՕ. — Տե՛ս, էտվին, քեզի հետ բարեկամի  
մը կամ ընկերոջ մը պէս չեմ խօսիր, այլ մեծ եղ-  
բօր մը պէս: Քու այս ընթացքդ՝ մեր գերդաս-  
տանին արժանապատուութեան եւ անունին դէմ է.  
այս ապրելակերպովդ կ'որատաւորուի մեր ընտա-  
նեկան պատիւը:

ԷՏՎ. — Անմեղ աղջիկ մը սիրելո՞ւս համար:

ԵԷՆՕ. — Անմե՞ղ, ո՛վ գիտէ, թերեւս մինչեւ  
իսկ...

ԷՏՎ. — Եէնօ՛, ի՞նչ կ'ուզես ըսել:

ԵԷՆՕ. — Զբօսարանի թեթեւաբարօյ աղջիկ  
մը, այնպէս չէ՛:

ԷՏՎ. — Եէնօ՛, կ'աղաչեմ:

ԵԷՆՕ. — Այո՛, և խնդրեմ մի՛ մօռնար որ  
դուն ազատ չես. նշանածդ՝ կոմսուհի Շթա  
քեզի կը սպասէ:

ԷՏՎ. — Շթասին իմ նշանածս չէ:

ԵԷՆՕ. — Ինչե՛ր կ'ըսես, էտվին... դուն ա-  
նոր հետ չնշանուեցա՞ր:

ԷՏՎ. — 15 տարի առաջ՝ այո՛, այն ատեն ես  
գպրօցական էի, եւ Շթասին պզտիկ աղջիկ մը:

Տ Ե Ս Ի Լ Ը.

Անոնք եւ Սիլվա

ՍԻԼՎ. — Էտվի'ն, քեզի կը ուպասենք, ա', ներեցէ՛ք:

ԷՏՎ. — Մեծ սպայ՝ Եէնօ', օրիորդ Սիլվա վա կօքու:

ՍԷԼ. — Երախտապարտ ենք որ մեր այս գիշերուան ուրախութեան մասնակից պիտի ըլլաք:

ԷՏՎ. — Ո՛չ, ո՛չ: Հիմա պիտի երթայ:

ԵԷՆՕ. — Այո, պիտի երթամ և Էտվինն ալ միասին պիտի յանիմ:

ՍԻԼՎ. — Իրա՞ն. ուրեմն այս գիշեր երկու մեկնու՞մ կ'այ. ես ալ քիչ ետքը Թրիէսթէ կը մեկնիմ:

ԵԷՆՕ. — Այո՞:

ՍԷԼՎ. — Ներողութիւն, ընկերներս ինծի կ'ըստապասեն: (Կ'երթայ):

ԵԷՆՕ. — Էտվի'ն, շատ մի՛ խեղ, գէշ պիտի ըլլաս, ա՛լ երթանք:

ԷՏՎ. — Լաւ, բայց կէս ժամէն. դուն գնա՛ Գրիսթալ: Կէս ժամէն կ'երթանք:

Տ Ե Ս Ի Լ Թ.

Անոնք, Պօնի

ՊՕՆԻ. — Վա՛յ, Եէնօ', երա՞զ է. թե՛չ, դո՛ւն ալ միասին պիտի երթան:

ԷՏՎ. — Եէնօ', կէս ժամ ետքը եկուր (Կ'երթայ):

ՊՕՆԻ.— Զմեռնային պարտէզն էինք, պարի  
տանն լսեցի որ էտվինը վիեննա պիտի երթայ.  
Խնդիրը ի՞նչ է:

ԵԷՆՕ.— Խնդիրը շատ պարզ է. էտվինը բաժ-  
նել Սիլվայէն և վիեննա տանիլ:

ՊՕՆԻ.— Եա!

ԵԷՆՕ.— Որովհետև էտվին նշանուած է:

ՊՕՆԻ.— Որո՞ւ հետ:

ԵԷՆՕ.— Մօրաքրոջը աղջկան կամսուհի Շթա-  
օիի հետ:

ՊՕՆԻ.— Վա՛յ անտռակ, այդ մասին բնաւ չէր  
խօսած ինձի:

ԵԷՆՕ.— Հարսնիքն ալ այս օրերս պիտի ըլ-  
լայ, որոշուած է: Հայրը՝ հրաւիրադիրները ան-  
գամ պատրաստել տուաւ. բայց էտվին վիեննա  
հասնելէն ետքը պիտի իմանայ:

ՊՕՆԻ.— Սա հրաւիրադիրներէն մէկ հաս  
Սիլվային ցուցնեմ:

ԵԷՆՕ.— Բայց հեմա մի՛ ցուցներ. մեր մեկ-  
նելէն յետոյ:

ՊՕՆԻ.— Անհոգ եղի՛ր:

ԵԷՆՕ.— Ես Գրիսթալ պիտի երթամ. կէս  
ժամ ետքը կուգամ. առայժմ ցտեսութիւն:

ՊՕՆԻ.— Մինչեւ դուքը ընկերանամ քեզի:  
(Կերթան):

Տ Ե Ս Ի Լ Չ.

էտվին, Սիլվա, Ֆերի եւ ամէնքը

ԷՏՎ.— Եկէ՛ք, ամէ՛նքդ ալ եկէք, տեսէք  
ի՞նչ պիտի ըսեմ:

ՅԷՐԻ.— Պիտի րսես որ վիեննա կ'երթաս, ասիկա իմացանք արդէն:

ԷՏՎԻՆ.— Ո՛չ, ուրիշ բան մը: Օրիորդ Սիլվա վարէսքու Ամերիկա պիտի չերթայ, հոս պիտի մնայ:

ԱՄԷՆԲԸ.— Պրավօ՛, պրավօ՛:

ՍԻԼՎԱ.— Բայց, իշխան, պէտք է երթամ:

ԷՏՎԻՆ.— Ես կ'արգիլեմ:

ՍԻԼՎԱ.— Ի՞նչ իրաւունքով:

ԷՏՎ.— Ամուսնակա՛ն իրաւունքով: Բարեկամներս, Օրիորդ Սիլվա վարէսքուի հետ կ'ամուսնանամ:

ՍԻԼՎ.— Բայց ի՞նչպէս կարելի է:

ԷՏՎ.— Հիմա կը տեսնէք. շուտով թուղթդրի:

ՅԷՐԻ.— Վա՛յ անպիտան, գործը լրջացաւ: Տղա՛ս, հոգի՛ս, անս՛ուշս:

ԷՏՎ.— Փաստաբան մը, կամ նօտար մը, շո՛ւտ:

ԿԱՌՈՍՆ.— Այս ժամանակ ո՞ւրկէ գտնեմ:

ՅԷՐԻ.— Կը գտնուի, կը գտնուի. խաղասրտակը բօքէրի սիրահար նօտար մը կայ:

ԷՏՎ.— Կանչեցէ՛ք:

ՅԷՐԻ.— Գաֆէ-չանթաններուն մէջ ծերացայ՝ բայց պտոի մէջ հարսնիք՝ առաջին անգամ է որ կը տեսնեմ:

ՍԻԼՎ.— Բայց էավին, ընտանիքդ ի՞նչ պիտի լսէ:

ԷՏՎ.— Կը սիրե՞ս ինձի, Սիլվա:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա .

Անոնք ու նօտարը

Ֆէրի .— Նօտարը եկաւ , Հաստափոր ծե-  
բուկս , առ ձեռքդ շուտով գրելը և թուղթը , գրէ  
էտովինին անսովոր ուխտը :

ՆՕՏԱՐ .— Եղբո՛յր , ազուր բօքէն մը կը  
գարձնէինք կոր , ի՞նչ ալ տաքցեր էինք , երեք  
հատ սոս ունէի , ճիշդ ոէսթ քաշելու տեղն էր :

Ֆէրի .— Հոգ չէ՛ , ոէսթին բուն տեղը հո՛ւն է :

ԷՏՎ .— Նստեցէք և գրեցէք . «Ես , Քարլ  
Մարիա բրէնս Վայլէրշայմ Բօնալա էտովին՝ Օ-  
րիորդ Սիլվա Վարէսքուի հետ պիտի ամուսնա-  
նանամ ութը շաբաթէն : Ներկաներէն կը խնդրե-  
սր վկայ ըլլան :»

(Երգ)

ՍԻԼՎԱ .— Էտովին , ի՞նչ ըրիր ,

Խորհէ , լա՛ւ խորհէ , մտածէ , կարելի չէ :

ՆՕՏ .— «Ես Շարլ Մարիա բրէնս Վայլէրշայմ  
Բօնալա էտովին՝ Օրիորդ Սիլվա Վարէսքուի հետ  
պիտի ամուսնանամ ութը շաբաթէն : Ներկանե-  
րէն կը խնդրեմ որ վկայ ըլլան :

ՍԻԼՎ .— Կարելի բան չէ :

ԱՂՋԻԿՆԵՐ .— Աղջիկներ , աղջիկներ , աղջիկ-  
ներ շանթանի ,

Լաւ գիտէք կեանքը՝ դեռ պատանի ,

Անհոգ էք , անպիոյթ էք , շանթանի կոյսեր ,

Գերի էք դարձուցեր չափահաս եւ ծեր :

**ԱՄԷՆՔԸ.** — Աղջիկներ, աղջիկներ, աղջիկներ  
շանթանի,

Գիտէք դուք սիրել ձեր կամ պատանի:

Փոխել յահախ սէր, սիրահար,

Եւ կեանքի բաժակը վատթար

Մինչեւ վերջը վերջը վերջը կուլ տալ

Մինչեւ վերջը վերջը վերջը կուլ տալ:

ԷՏՎ. — Նօտար ի՞մ յարգելի

Նօտար ի՞մ յարգելի:

**ՖԻՐԻ.** — Սիրելիներս, մօտեցէք զաւակներս,

Կ'օրհնեմ ձեզի. զոր Սստուած

Զուգեաց մարդիկ մի մեկնեսցեն:

ԷՏՎ. — Կը սիրեմ քեզի:

ՍԻՎ. — Ես ալ քեզի կը սիրեմ,

Սիրով ապրինք մէկտեղ

Յաւէտ եւ երջանիկ ըլլանք:

**ՖԻՐԻ.** — Օրհնեալ ըլլաք, ազնիւ տղաք,

Սիրտիս խորէն հազար մաղթածք:

ՍԻՎ. — Ինչու այլ տեղ փնտռել երջանկու-

թիւնն անյատակ,

Երբ ան բոյն է դրած այստեղ՝ մեր

կուրծքերուն տակ.

Որտեղ որ կայ սէր՝ այնտեղ եւ եր-

ջանկութիւն կայ,

Երջանիկ է ան՝ որ իր մէջ ունի սէր

ոսկեայ:

(Երգը կ'աւարտի)

**ՖԻՐԻ.** — Հօ՛, նուագապետ, Մէնտէլարնի «Հար-

սանեկան Քայլերգը»:

(Պար)

ՏԵՍԻԼ ԺԲ.

Անոնք — Եէնօ

Եէնօ. — Տիկիննե՛ր, պարօննե՛ր, ներեցէք  
ինձի՛ եթէ քանի ժը բոպէ խան յարեմ ձեր զուար-  
ձութիւնը, էտվին, կէս ժամ եղաւ արդէն:

ԷՏՎ. — Հիմա... ոչ, չեմ գար:

Եէնօ. — Բայց... չէ՞ որ քիչ առաջ խոստա-  
ցար:

ՍԻԼՎ. — Գնա՛ էտվին, դնա՛, ասիկա իմ  
առաջին խնդրանքս է:

ԷՏՎ. — Լաւ, կ'երթամ: Հի՛՛մա, Եէնօ:

Եէնօ. — Դուրսը քեզի կը սպասեմ: (Կ'եր-  
թայ)

ՏԵՍԻԼ ԺԳ.

Բացի Եէնօէն՝ առաջուանները

ՍԻԼՎ. — Էտվին, մինչեւ վերադարձդ հաս  
քեզի պիտի սպասեմ:

ԷՏՎ. — Դնորհակալ եմ, սիրելիս:

(Երգ)

Կեցիր բարով, իմ Սիլվա,  
Կուգամ հաւատա:

ՍԻԼՎ. — Երթաս բարով, իմ էտվին,  
Հոս կուգաս կրրկին:

Դուն իմ միակ սէրս ու կեանքս ես եւ  
 իմ հոգւոյս իղծն ես համակ,  
 էՏՎ. Առանց քեզի չեմ ապրիր, քաղցրիկ  
 ՍԻԼ. հրեշտակ,  
 Դո՛ւն իմ միակ սէրս ու կեանքս ես, իմ  
 հոգւոյս իղծն ես համակ:  
 ՍԻԼՎ. Գընա, սիրելիս, սիրտիս տէրը  
 դուն ես միայն:  
 էՏՎ. Կ'երթամ, սիրելիս, սիրտիս տէրը  
 դուն ես միայն:

(Էսվին կ'երթայ):

ՍԻԼՎ. — Էտվին, եկուր նորէն:

(Երգը վերջ կը գտնէ)

### ՏԵՍԻԼ ԺԴ.

Անոնք, Պօնի

ՊՕՆԻ. — Ես պատրաստ եմ, միայն սա ակ-  
 ոայր վրձինս դնելու տեղ չգտայ: Ճեպընթացին  
 շատ ժամանակ չ'այ. երթանք... Ըսէ՛ նայիմ,  
 դուն իմ հոգի՞ս ես թէ չէ:

ՍԻԼՎ. — Պօնիֆաս, մի՛ նեղանար ինձի, բայց  
 ես... ես... պիտի... չմեկնիմ:

ՖԻՐԻ. — Սիլվան հոս պիտի մնայ:

ՊՕՆԻ. — Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչպէս:

ՖԻՐԻ. — Սիլվան կը մնայ հոս՝ իբրեւ իշխա-  
 նուկի էտվին:

ՊՕՆԻ. — Ասիկա ըլլալիք բան չէ, էտվին քե-  
 ղի հետ կ'առակ է ըրեր:

ՍԻԼՎ.— Ո՛չ, ո՛չ, կը սխալիս :

ՊՕՆԻ.— Անկարելի է. էտ վինին համար ան-  
կարելի է նշանուել :

ՍԻԼՎ.— Անոր համար անկարելի՞ է :

ՖԵՐԻ.— Ինչո՞ւ :

ՊՕՆԻ.— Որովհետեւ էտ վինը ուրիշ նշանած  
մը ունի արդէն, մօրաքրոջը աղջիկը՝ կոմսուհի  
Շթասին :

ՍԻԼՎ.— Դուն կը տես, Պօնի, տուա է :

ՊՕՆԻ.— Ըսէ՛, դուն իմ հոգի՞ս ես թէ չէ :  
Նայէ՛, հրաւէրագիրն ալ ունիմ. Եէնօն առւառ :

ՍԻԼՎ.— Քիչսան Լիբէրթ Վայլէրշայմ Լիբէր  
Մարիա և իր կողակիցը իշխանուհի Լիբէրթ Վայ-  
լէրշայմ Աննիլթա, պատիւ ունին ձեզի հրաւիրե-  
լու իրենց որդւոյն իշխան Վայլէրշայմ Րօնալա էտ-  
վինին՝ իրենց քեռաղջկան կոմսուհի Օլէնպէրկ Ա-  
նասթասիա Շթասիի հետ ամուսնութեան հանգէ-  
օին :

ՊՕՆԻ.— Տեսա՞ր... Ըսէ՛, դուն իմ հոգի՞ս  
ես թէ չէ. Սիլվա, քեզի ամուսնութիւն չի վայլեր,  
դուն արուեստագէտներուն ընտանիքին կը պատ-  
կանիս : Միթէ կեանքի մէջ քեզի միայն մէ՞կ հոգի  
պէտք է. դուն պէտք է ունենաս հինգ, տասը,  
հարիւր հազար պաշտողներ, դուն պէտք է իշխես  
հարիւրաւորներու, դուն միալու ես Չարտաշի իշ-  
խանուհի :

ՍԻԼՎ.— Իբուռնք ունիս, ես արթիթ եմ,  
եւ ամուսնանալու չեմ... եւ էտ վինինը չեմ կըր-

Նար ըլլալ... ես պէտք է ըլլամ եւ մնամ միայն  
Սիլվա Վարէսքու... Էտվին այս բանը ընելու  
չէր... Բայց ինչու չընէր... չէ՞ որ ան իշխան  
մըն է, իսկ ես... այո՛, այո՛, ես պէտք է մնամ  
Սիլվա, իշխանուհի Չարտաչի, ոչ թէ իշխանուհի  
Վայլէրչայմ... այո՛:

(Նրգ)

Այր մարդիկ, անառակ, ա՛խ, յար մարդիկ  
Կիներըս ըրած են խաղալիկ:

Առանց քեզի չեմ ապրիր,

Հաւտա չեմ ապրիր,

Առանց քեզի կեանք չունիմ,

Առանց քեզի չեմ ապրիր,

Հաւտա չեմ ապրիր,

Առանց քեզի կեանք չունիմ»

Հաւտա կեանք չունիմ:

Միշտ այս խօսքերով կը խաբեն անմեղ կիները,  
Միշտ այս խօսքերով կը խաբեն անմեղ կիները:

Ա՛խ, ճակատագրէն մի՛ փախչիր:

Կեանքն ալ չի փախչիր,

Ա՛խ, կիներ խղճալի, ա՛խ, խղճալի կիներ,

Այր մարդոց հանոյքին դուք գերի էք դարձեր,

Կը վառեն մեր հոգին, կը տանջեն, կը խաբեն

եւ այսպէս կ'ապրինք մենք կիներս ամէն:

(Սիլվան կը նուաղի, կը օանին):

ՏԵՍԻԼ ԺԶ.

Ֆերի, Ծառան, յետոյ՝ նուագածուն

Ֆիֆի.— Ժամը երեքն է... ես այս ատեն  
կրնամ ասուն երթալ... դեռ շատ կանուխ է...  
կառսօն... շո՛ւտ, Տուգայի գինի... (Հրաւիրագի-  
րը կը կարդայ). Յիկա՛ն... նուագէ ինծի համար:  
Ա՛յնպիսի կտոր մը կ'ուզեմ որ գնէ վայրկեանի մը  
համար՝ մոռցնել տայ ինծի իմ բոլոր վիշտերս:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

## Բ Ա Ր Ա Ր

Դուքսին ապարանքին մեզ սալօն մք

Տ Ե Ս Ի Լ Ա .

Ի յսան-ի յսանուհի

ՔՕՐՕ. — Ուրախութեան օր է այսօր,  
Ուրախ ըլլանք, բարեկամ  
Հանոյքով եւ պարով անցնին բոլոր  
Մեր ժամերը, ո՛վ բարեկամ:

ԻՇԽԱՆ. — Տես, Աննիլթա, տես՝ ի՛նչպէս կը  
պարեն, ի՛նչպէս կ'զբօսնուն:

ԱՆ. — Այո:

ԻՇԽ. — Ես աւելի ուրախ եմ որ կրցայ բարեկամներուս զուարճութեան այսպիսի գեղեցիկ առիթ մը պատրաստել:

ԱՆ. — Անշուշտ, Լէօբօլտ:

ԻՇԽ. — Եւ ի՛նչ առիթ, ի՛նչ յարմար առիթ՝ մեր բարեկամներուն հանդիսաւոր կերպով յայտարարելու համար մեր զաւակներուն ամուսնութեան որոշումը: Գո՞հ ես:

ԱՆ. — Հարկաւ գոհ եմ:

ԻՇԽ. — Տես, տես, մեր սիրելի զաւակները ի՛նչպէս պարելով վերացեր են. երկու աղաւնիներ:

ԱՆ. — Այո, անթեւ աղաւնիներ. կարծեմ այս կողմը կուգան:

ԻՇԽ. — Ուրեմն մենք հեռանանք, թերեւս կ'ուզեն մինակ մնալ, թերեւս իրարու քսելիքներ ունին:

ԱՆ.— Իրաւ է, սալօն երթանք:

ԻՇԽ.— Աննիլթա, չե՞ս կրնար գաղտնի մտիկ  
ընել անոնց խօսակցութիւնը:

ԱՆ.— Անհոգ եղիր, ատիկա իմ հին սովո-  
րութիւնս է: (Կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Բ .

ԷՏՎԻՆ-ՇԹԱՍԻ

ԷՏՎԻՆ.— Օ', Շթասի, կամաց:

ՇԹԱՍԻ.— Նստէ հող եւ ուշադիր ինծի նայէ:

ԷՏ.— Նայիմ:

ՇԹ.— Միայն նայիլով չրլար, պէտք է նաեւ  
որ ինծի հետ սա անհոգի ընթացքիդ վերջ տաս,  
եւ... ամուսնանանք... հօրդ փափաքն ալ այս է:

ԷՏ.— Այո, գիտեմ:

ՇԹ.— Ըսէ տեսնեմ, կը սիրե՞ս:

ԷՏ.— Ո՞վ:

ՇԹ.— Մի յուզուիր, տղա՛ս, բան... Սիլվան:

ԷՏ.— Ուրկէ իմացար:

ՇԹ.— Եէնօն ըսաւ: Քեզի բան մը ըսեմ,  
մինչեւ որ այս խնդիրը չկարգադրուի, կարելի  
չէ որ մեր փափաքսերը գոհացում գտնեն:

ԷՏ.— Եղած է:

ՇԹ.— Կատարելապէ՞ս:

ԷՏ.— Է՛հ...

ՇԹ.— Հա՛, ուրեմն առժամանակեայ կերպով:

ԷՏ.— Ո՞չ:

ՇԹ.— Քու հօս եկած գիշերդ՝ Սիլվան ալ  
Պժծերիկա մեկներ է:

ԷՏ.— Է՛յ, ուրի՞շ, ուրի՞շ՝

ՇԹ.— Ուրի՞շ... ուրիշ այն որ հակառակ հարիւր անգամ հեռագրելուդ՝ Սիլվայէն պատասխան չես կրցած ստանալ։

ԷՏ.— Շեթասի՛, բաւական է։

ՇԹ.— Քեզի միայն մէկ բան պիտի հարցնեմ. ըսէ՛ գեղեցի՞կ էր։

ԷՏ.— Սյո։

ՇԹ.— Ինձմէ աւելի՞ գեղեցիկ։

ԷՏ.— Բաւական է ըսի, Շեթասի։

ՇԹ.— Երկու ամիսէ ի վեր հարսնիքի պատրաստութիւն կը տեսնուի, եւ միշտ ալ յետածգուեցաւ։

ԷՏ.— Ես յանցաւոր չեմ, պատասխանի՛ սպասեցի։

ՇԹ.— Ի՞նչ պատասխան։

ԷՏ.— Ես յանցաւոր չեմ, պատասխանի սպասեցի։

ՇԹ.— Ի՞նչ պատասխան։

ԷՏ.— Ոչինչ, ոչինչ։

ՇԹ.— Էտվի՛ն, հարսնիքը հիմա կամ երկու ամիս յետոյ ըլլայ, ի՞նչ մնաս ունի, դուն ինչպէս որ կը փափաքլս...

ԷՏ.— Անորհակալ եմ, Շեթասի։

ՇԹ.— Էտվին, չես գիտեր թէ որչափ երջանիկ եմ հիմա, թրա լա լա,

ԷՏ.— Քեզի սիրած եմ ես անչափ, թրա լա լա, ատոր եղիւր վստահ,

ՇԹ.— Շուտ կը միանանք՝ եւ ընդ միշտ, թրա լա լա, եւ կ'ապրինք շատ ուրախ

ԷՏ.— Չենք ունենար մենք երբէք վիշտ, թրա լա  
լա, եւ կ'ապրինք շատ ուրախ,

ՇԹ.— Խօսէ ինձի սիրոյդ ճասին թրա լա լա,  
իմ սիրելի, աղու որ էտվին,

ԷՏ.— Ես կը սիրեմ իմ սիրունիկ Շթասին,  
հաւատա իմ խօսքին:

ՇԹ.— Եկուր, միասին բոյն շինե՛ք եւ մէկտեղ ապրինք,  
Երջանիկ ըլլանք, վայլենք բիւրաւոր բարիք,  
Բայց ես անդարձ կը փախչիմ թէ դաւաճան ես,  
Դուն կ'երթաս դէպի հիւսիս, դէպ հարաւը՝ ես,

ԷՏ.— Առանց քեզի օրերս ամբողջ կատարեալ  
տանջանք.

Միայն քեզի սիրեցի, երջանիկ ըլլանք,  
Իսկ դուն իմս ես, Շթասի, այս ինչ մեծ բերկրանք  
Ուրախ օրեր աստ ունի՛ք, ամէն ցաւ մոռնանք:  
ՏՈՒԷԹ.

### Տ Ե Ս Ի Լ Գ .

#### Ի Շխան-ի խանուհի

ԻՇԽԱՆ.— Է՛, Աննիլթա, ինչպէ՞ս, լսեցի՞ր  
խօսակցութիւնը, կը սիրուըտէին կար. չէ՞:

ԱՆՆԻԼԹԱ.— Ա՛խ, Լէօթօլտ:

ԻՇԽ.— Այդ ի՞նչ է, կուլա՞ս:

ԱՆ.— Այո, ի՞նչ ընեմ:

ԻՇԽ.— Ի՞նչ կայ:

ԱՆ.— Ի՞նչ պիտի ըլլայ, մեր ձագուկները  
իրար չեն սիրեր կարծեմ:

ԻՇԽ.— Ինչէ՛ն հասկցար, բա՞ն մը ըսին:

ԱՆ.— Այո, թէ եւ լաւ մը չհասկցայ, բայց  
էտվին միւսէն պատասխանի մը կ'սպասէ եղեր,  
եւ կը կարծեմ որ...

ԻՇԽ.— Ի՞նչ կը կարծես որ...

ԱՆ.— Կը կարծեմ չէ, վստահ եմ որ ան ժիւսին եւ էտփինին մէջ բան մը պատահած է, այնպիսի բան մը որ... փորձանք, հասկցար, չէ՞ :

ԻՇԽ.— Փորձանք, ի՞նչ փորձանք... բա՛ն... այսինքն...

ԱՆ.— Այո, Լէօբօլտ, այսինքն:

ԻՇԽ.— Օհ, ահարկո՞ւ փորձանք:

ԱՆ.— Այո՛, ահարկո՞ւ փորձանք:

ԻՇԽ.— Ի՞նչպէս ազատիլ, Աստուած իմ, ի՞նչպէս: Խենդենալու բան է:

ԱՆ.— Լէօլօլտ, սիրելիս, մի յուզուիր, պաղարիւն եղիր. ի՞նչ ընենք, պզտիկը գիւղ մը, ստնտուի մը կը յանձնենք, հոն առանց մէկը իմանալու թող մեծնայ:

ԻՇԽ.— Գի՞ւղ մը, ստնտուի՞ մը, ո՛չ, երբէք. քնդհակառակը հոս պիտի պահեմ, եւ իբր պատիժ պիպրօնով պիտի մեծցնեմ:

ԱՆ.— Պիպրօնո՞վ, ի՞նչ կ'ըսես, Լէօբօլտ, կը մոռնամ որ պզտիկ Վէյլէրշայմ մըն է:

ԻՇԽ.— Այո, Վէյլէրշայմ մը որ Վարէսքուով խառնուած է:

ԱՆ.— Հիմա թողունք ատիկա, սիրելիս, ատոր դարմանը իր ժամանակին կը գտնենք, հիւրերէն հեռու մնացինք, երթանք:

ԻՇԽ.— Իրաւունք ունիս, երթանք: (Կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Դ.

Պօնի-Սիլվա-Մառայ-յեօյ՝ Իբիսան Աճնիլթա  
Շքասի-էսվին եւ հիւրեր

ՊՕՆԻ.— Իմացուցէք. Կոմս Պօնի Պօնիֆաս Քանցիանու:

ՍԻԼՎԱ.— Եւ իր կինը՝ կոմսուհի Քանցիանու:

ՊՕՆ.— Իրաւունք ունիք, կոմս եւ կոմսուհի Պօնի Պօնիֆաս Քանցիանու: Շաքար մը կ'առնէ՞ք, բարեկամս:

ՍԻԼ.— Պօնի:

ՊՕՆ.— Հրամմեցէք:

ՍԻԼ.— Մէկ վայրկեանի մէջ երկու կաֆ ըրիր, եթէ այսպէս շարունակես՝ մեր խաղը պիտի յայտնուի:

ԻՇԽ.— Օ՛, աչքերուս հաւատա՞մ արդեօք. կոմս Քանցիանուն, մեր Պօնին հոս, եւ իր տիկինն ալ միասին, քեզի չարածնի, ամուսնացար եւ մեզի չիմացուցիր: Կոմսուհի:

ՊՕՆ.— Հաւատացէք, իշխան, որ բան, բան եղաւ այնպէս չէ՞, զիտէ՞ք, մենք մեղրալուսնի մէջ ենք:

ՍԻԼ.— Պօնի:

ՊՕՆ.— Այո: Շատ յանկարծական էր, պարզապէս խաղ մը:

ՍԻԼ.— Պօնի:

ԻՇԽ.— Խա՞ղ մը

ՊՕՆ.— Չէ, խաղ չէ, կատարեալ վէպ մը պիտի ըսէի:

ԻՇԽ.— Պօնի, միշտ նոյն զուարճախօս Պօնին ես:

ՊՕՆ.— Այո միշտ նոյնն եմ:

ԻՇԽ.— Ինչ որ է, բոլոր սրտովս կը շնորհաւորեմ ձեզի: (Շքասի եւ հիւրեր):

ՊՕՆ.— Ես ալ:

ՍԻԼ.— Պօնի:

ԻՇԽ.— Ահա՛, քեռաղջիկս՝ կոմսուհի Շթասի:

ՊՕՆ.— Մեծ պատիւ է ինձի համար: Հրամմեցէք:

ԻՇԽ.— Պօնի, շատ լաւ ըրիր որ եկար, էտ-  
վին շատ ուրախ պիտի ըլլայ: Ո՞ւր է էտվինը,  
Շթասի:

ՇԹԱՍԻ.— Նամակ մը գրելու համար իր սնն-  
եակը ելաւ, երթամ իմաց տամ:

ՊՕՆ.— Չէ՛, չէ. ատոր համար յոգնելու ի՞նչ  
հարկ կայ. ահապարե ու պէտք չունինք, հարկաւ  
պիտի գայ: Օրիորդ...:

ՄԱՔ.— Կարծեմ տիկին կոմսուհին Սիլվային  
կը նմանի:

ՍԻԼ.— Ո՞վ, ե՞ս, պարոն:

ՄԱՔ.— Սիլվա Վառէսքուն, մինչեւ իսկ այս  
անգամ Նիւ-Եօրքի Վառիէթէին մէջ տեսած էի:

ՍԻԼ.— Օհ, Սիլվա Վառէսքուն:

ՄԱՔ.— Կո՛մսուհի Սիլվան:

ՍԻԼ.— Ես չեմ ճանչնար, բայց ամուսինս կը  
ճանչնայ կարծեմ, այնպէս չէ՞, Պօնի: Պօնի:

ՊՕՆ.— Հա՛... ի՞նչ կայ:

ՍԻԼ.— Դուն Սիլվա Վառէսքուն կը ճանչնա՞ս,

ՊՕՆ.— Ե՞ս... կրնայ ըլլալ:

ՍԻԼ.— Իրաւունք ունիք. ասիկա առաջինը  
չէ որ կը պատահի ինձի. այսքան նմանութիւն.  
Իրա՞ւ ես Սիլվային այդքան կը նմանիմ:

ՊՕՆ.— Շատ հետաքրքիր բան է, բայց...

ՍԻԼ.— Հիմա ես ալ կը փափաքիմ անգամ  
մը գօնէ տեսնել այդ Սիլվան:

ՄԱՔ.— Անոր մասին բաւական կարեւոր  
գրոյցներ կան: Իբր թէ հունգար ազնուականու-  
թենէն Վիեննացի իշխան մը սիրահարուած է  
եղեր իրեն, թէ պիտի ամուսնանան եղեր, եւ թէ  
այդ Սիլվան Պուտաբէշթի մէջ Չարտաշի իշխա-  
նուհին կը կոչուի եղեր:

ԱՄԷՆՔԸ .— Չարտաշի իշխանուհին:

ՍԻԼ .— Իրա՛ւ զարմանալի բան:

ՊՕՆ .— Եւ շատ զարմանալի, այնպէս չէ՞:

ԻՇԽ .— Վերջացնենք այս խօսքը, Սիլվան  
երբէք չի կրնար նմանիլ տիկին կոմսուհիին, կա-  
րելի՞ բան է որ հասարակ երգչուհի մը, այնպէս  
չէ՞ Պօնի, տիկին կոմսուհիին նմանի:

ՊՕՆ .— Իշխանը արժանապատուութեան  
դպչիլ սկսաւ:

ԷՏՎԻՆ .— Վայ Պօնի, դուն հոս ե՞րբ եկար:

ՊՕՆ .— Չարմանալու ի՞նչ կայ, դուն ըսէ  
նայիմ, դուն իմ հոգիս ես թէ չէ՞:

ԻՇԽ .— Հոս նայէ, էտվին, իր ամուսինը,  
կոմսուհի Պօնիֆասը:

ԷՏ .— Օ՛, ամուսնացա՞ր, կոմսուհի... Սիլվա:

ՊՕՆ .— Ոյժանակը պայթեցաւ...

ԱՄԷՆՔԸ .— Ան ալ խարուեցաւ:

ՍԻԼ .— Իշխանն ալ խարուեցաւ, Միայն դուք  
չէ, ձեզի նման շատերը նմանցուցին: Պօնի, դուն  
Սիլվան կը ճանչնայիր, ինչո՞ւ մեր իրարու նմա-  
նելու մասին բան մը չըսիր ինձի:

ՊՕՆԻ .— Ի՞նչ կայ ո՞ր, ընդհանրապէս կիները  
իրարու կը նմանին: Մանաւաձդ Հունդարուհիները .

ԷՏՎԻՆ .— Կոմսուհին Հունգա՞ր է: Վարպետ  
ես, անպիտան:

ՊՕՆԻ .— Շա՛տ ազնիւ էք:

ՍԻԼՎ .— Շա՛տ, շատ երջանիկ ենք. այն-  
պէս չէ՞, Պօնի:

ՊՕՆԻ .— Բնակոնքբար, խօսք չի վերցնէր:

ԻՇԽԱՆ .— Կոմսուհի, հրամայեցէք քիչ մը՞ ալ  
պարտարանը երթանք, կը պարենք:

ՍԻԼՎ .— Սիրով, իշխա՛ն:

ՇԹԱՍԻՆ. — Կո՛մս, կ'ուզէ՞ք որ մենք ալ միա-  
սին պարենք :

ՊՕՆԻ. — Ինձի համար մեծ երջանկու թիւն է :

ՇԹԱՍԻ. — Ինչո՞ւ կեցօք :

ՊՕՆԻ. — Բան... բայց գիտէ՞ք, կինս քիչ յը  
նախա՛ն ձա է, չեմ գիտեր որ... ներեցէք :

ՇԹԱՍԻ. — Ուրեմն, հոգ չէ, ես ուրիշ պար-  
ընկեր մը կը գտնեմ :

### Տ Ե Ս Ի Լ Ե .

Էտվին, Պօնի

ԷՏՎԻՆ. — Է՞, պարոն, կոմս, այս ի՞նչ զօժէ-  
տի է :

ՊՕՆԻ. — Հա՛, հա՛, հա՛, նայէ՛ Էտվին, գուն  
իմ հո... հո... գի՞ս ես թէ չէ :

ԷՏՎԻՆ. — Ես քու հոգիդ չեմ : Ըսէ՛, շո՛ւա,  
աս ի՞նչ խաղ է :

ՊՕՆԻ. — Կեցի՛ր, համբերէ քիչ մը, մի՛ բար-  
կանար :

ԷՏՎԻՆ. — Ըսէ՛ :

ՊՍՆԻ. — Քանի՛ ասանկ ինձի թօթուեո՛ խելքս  
ալ կը թօթուուի կոր, ըսելիքս կը մոռնամ կոր :

ԷՏՎԻՆ. — Լա՛, ըսէ՛ :

ՊՕՆԻ. — Տե՛ս, մենք իբար...

ԷՏՎԻՆ. — Ի՞նչ :

ՊՕՆԻ. — Նայէ՛, գուն իմ հո...

ԷՏՎԻՆ. — Ի՞նչ, ըսէ՛ :

ՊՕՆԻ. — Ա՛յ, ա՛յ, ա՛յ, թեւս պիտի կտարեա՛ս  
Ձգէ՛ որ բսեմ :

ԷՏՎԻՆ. — Լա՛ւ, ըսէ՛ :

ՊՕՆԻ. — Մենք իբարու սիրահարուա՛մ...

ԷՏՎԻՆ. — Ի՞նչ :

ՊՕՆԻ. — Չէինք :

ԷՏՎԻՆ. — Ինչո՞ւ ամուսնացաք :

ՊՕՆԻ. — Ինչո՞ւ ամուսնացանք...

ԷՏՎԻՆ. — Ա, ո՛ր, ինչո՞ւ :

ՊՕՆԻ. — Կեցի՛ր, շաքար մը ա՛ն :

ԷՏՎԻՆ. — Ինչո՞ւ ամուսնացաք :

ՊՕՆԻ. — Ատանկ մի՛ թօթուեր որ ըսեմ, հան-  
գարտէ քիչ մը :

ԷՏՎԻՆ. — Շո՛ւ ա ըսէ, ապա թէ ոչ ձեռքէս  
կիմա...

ՊՕՆԻ. — Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տեղը դի՛ր, տեղը  
դի՛ր : Օգնեցէ՛ք :

## Տ Ե Ս Ի Լ Զ.

Անոնք, Սիլվա

ՍԻԼՎԱ. — Պօնի, սիրելի Պօնիս, ի՛նչ ունիս :

ՊՕՆԻ. — Օգնութեան հասի՛ր, ներսս դուրսս  
իրար ա՛նցաւ. քիչ մնաց պիտի խայթէր ինձի :

ՍԻԼՎԱ. — Ո՞վ :

ՊՕՆԻ. — Ո՞վ, ո՞վ կրնայ ըլլալ... իշամեղուն :  
Հոգիս ցաւցուց :

ՍԻԼՎԱ. — Խեղճ Պօնիս, հոգ մի՛ ըներ. ես  
քովդ եմ : Բայց աւելի՛ լաւ է, գնա՛ ներս, ժա-  
մանակ կ'անցընես, կր բացուիս : (Պօնի կ'երթայ)

ԷՏՎԻՆ. — Սիլվա !

ՍԻԼՎԱ. — Սիլվա՛, ո՛րքան անգութ ես : Ինչո՞ւ  
եկար :

ՍԻԼՎԱ. — Նշանածդ տեսնելու համար : Շատ  
կետաքքքիք էի :

ԷՏՆ. — Սիլվա՛ :

ՍԻԼՎԱ. — Այո՛, եկայ ե տեսայ կըշնորհաւորեմ.  
Գէշ չէ :

ԷՏՎ. - Սիլվա՛, ներէ՛ :

ՍԻԼՎ. - Յանցաւոր չես: Կը կարծես որ հեռա-  
նալէք ետքը լացի՞. ո՛չ, խնդացի, զուարճացայ:

ԷՏՎ. - Բայց Սիլվա՛ :

ՍԻԼՎ. - Այո՛, խմեցի, խնդացի, պարեցի, եր-  
գեցի. յետոյ՝ Պօնին բնաւ քեզի փնտռել չտուաւ.  
միակ փափաքս նշանածդ մօտէն տեսնել էր. տե-  
սայ. հիմա շատ աւելի երջանիկ եմ:

ԷՏՎ. - Սիլվա՛, առանկ պէտք էր:

ՍԻԼ. - Բաւական է, ա՛լ չխօսինք, ամուսինս  
կ ախանձի. Էտվի՛ն, դուն ալ գիտես որ ես հի-  
նին պէս չե՛մ ալ:

ԷՏՎ. - Լա՛ւ, բայց բարեկամ մեանք:

ՍԻԼ. - Շատ աղէկ:

ԷՏՎ. - Ուրեմն անցեալ օրերը երազ էին:

ՍԻԼ. - Այո՛, երազ...

ԷՏՎ. - Կը յիշե՞ս, Սիլվա:

ՍԻԼ. - Այո... Կը յիշեմ: (ԵՐԳ)

ՍԻԼՎ. - Օրերն անցեալ երազ էին.

Համոզուած եմ ատոր, Էտվին,

Անցան անոնք մէկիկ մէկիկ:

ԷՏՎ.ԻՆ. - Օրերն անցեալ երազ էին.

Համոզուած եմ ատոր, Սիլվա՛,

Անցան անոնք մէկիկ մէկիկ:

ՍԻԼ. - Էտվի՛ն, եղած էինք երջանիկ  
Գեղեցիկ օրեր մենք ապրեցանք,  
Տանջանք ու ցաւեր մենք չունեցանք,  
Երբեք, չեմ մոռնար ես:

ԷՏՎ. - Սիլվա՛, եղած էինք երջանիկ  
Գեղեցիկ օրեր մենք ապրեցանք,  
Տանջանք ու ցաւեր չունեցանք մենք  
երբէ՛ք:

Սէւվ. — Արդեօք կը յիշե՞ս:

ԷՏվ. —

Սէւ. — Յիշէ՛, էտվին այն քաղցրիկ օրերը, էտվին:

(Յ անգամ)

Յիշէ՛ խորունկ մեր այն սէրը Սիլվա՛,  
Ա՛խ, թէ ի՛նչպէս լաւ կ'անցնէին այդ օրերը

ՍԻԼՎԱ. — Այո, ասոնք ամենք-ես յիշեցի  
Այո, ասոնք ամենք ես յիշեցի,  
Այդ օրերուն ես ցանկացի,  
էսվին, քեզի ես հաւատացի:

ՍԻԼՎԱ. — } Թրալալա ուրախ էինք,

ԷՏվ. — } Թրալալա համբուրէինք:

Ա՛խ, ինչպէս լաւ կ'անցէին այդ  
օրերը, (Սիլվա եւ էսվին)

Յիշէ, էսվին, յիշէ, էսվին,

Ա՛խ, քե ինչպէս լաւ կ'անցնէին այդ օրերը:

Տ Ե Ս Ի Լ Է.

Շքասի-Պօնի

ՇԹՍՍԻ. — Բայց գիտէ՞ք, Պօնի, ձեր այս  
ըրածը լաւ բան չէ:

ՊՕՆԻ. — Հաւատացէ՛ք որ ձեզի առաջին ան-  
գամ իսկ տեսնալուս, այստեղ, սիրտիս մէջ «էր  
մը արթնցաւ, և վստահ եղէք, շատ խորին սէր մը:

ՇԹ. — Հապա ձեր տիկինը՞:

ՊՕ. — Օհ, իմ տիկինս:

ՇԹ. — Այո՛, եթէ իմանայ ձեր այս «իրոյ յայ-  
տարարութիւնը:

ՊՕ. — Թող իմանայ, որս է հոգ, ձեր նայուած-  
քովը ծունկերս կը դողան կոր:

ՇԹ. — Բայց դուք տակաւին ձեր մեղքալուս-  
նին մէջ էք:

ՊՕ.— Ո՛չ մեղո կայ, ոչ ալ լուսին :

ՇԹԱՍԻ.— Ինծի նայեցէք, բոլոր այրերը ձեզի պէ՞ս են :

ՊՕՆԻ.— Ինծի նայեցէք, բոլոր կիները ձեզի պէ՞ս են :

ՇԹԱՍԻ.— Ա՛խ, եթէ ես ամուսին մը ունե- նամ ե իմանամ որ այսպ ս ձեզի նման... :

ՊՕՆԻ.— Ի՞նչ կ'ընէիք :

ՇԹԱՍԻ.— Ի՞նչ կ'ընէի, մտզերը արմատէն կը փեթթէի : Ամուսինդ :

Տ Ե Ս Ի Լ Ը .

Աճճճ Սիլվա-էսվին

ՊՕՆ.— Անտեղուանքը մ'ըլլաք :

ՍԻԼ.— Պճի : Սա կօշիկիս կապը կը կապե՞ս :

ԷՏՎ.— Ներեցէք, ե՛ս...

ՍԻԼ.— Իշխան, ամուսինս կրնայ ընել :

ՊՕՆ.— Այո, իշխան, կնոջս բոլոր կապերը կապելու պարտականութիւնը իմս է :

ԷՏՎ.— Անպիտան : Շեփախ, լա՞ւ ես :

ՇԹ.— Չափազանց լաւ :

ԿՏՎ.— Իրա՞ւ, աղուորս :

ՍԻԼ.— Պճի, գուն ալ գեղեցիկ բառեր գաիր նայի՞մ, քիչ մը ինծի հետ սիրարանէ :

ՊՕ.— Ատիկա դժուար բան է :

ՍԻԼ.— Բան մը ըսէ :

ՊՕ.— Ի՞նչ ըսեմ :

ՍԻԼ.— Ինչ որ կ'ուզեա, աղւոր խօսք մը ըսէ :  
ՇՈՒՄ :

ՊՕ.— Ախ, իմ կպչուն կնիկս :

ՇԹ.— Ինծէ հետ վալս մը կը պարե՞ս :

ՊՕ.— Այո, այո :

ԷՏ.— Ձեզի չըսաւ :

ՊՕ.— Ներողութիւն, հասկցանք, աչքերդ  
ստանկ խոշոր խոշոր մի բանար :

ՍԻԼ.— Ինձի հետ պիտի պարես, Պօնի :

ՇԹ.— Կ'ուզեմ այնպէս մը պարել՝ որ ա-  
մէնքը նախանձին :

### Քուարթէթո

ԷՏՎ.— Սիրունիկ, փոքրիկ հրեշտակ ՇԹասի,  
ես կը սիրեմ քեզի

Պարենք, երգենք ես ու դուն՝

Խանդով, եռանդով լեցուն :

Յետոյ մենք երկուքս առանց հոգի

Տանք ինքզինքնիս հաճոյքի :

ՊՕՆ.— Սիրունիկ, խոշոր հրեշտակ Սիլվա  
Քեզ սիրելուս հաւտա,

Եկ, Սիլվա, պարենք մենք միասին,

Սյսպէս ամէնքն ալ թող նախանձին,

Յետոյ մենք երկուքս առանց հոգի

Տանք մենք մեզի հաճոյքի :

ՇԹԱ.— Եկ, իմ էտվին, եկ բռնենք պար միասին,

Այսպէս ամէնքն ալ թող նախանձին,

Յետոյ մենք երկուքս առանց հոգի

Տանք ինքզինքնիս հաճոյքի :

ՍԻԼ.— Եկ, Պօնիֆաս, եկ բռնենք պար միասին,

Այսպէս ամէնքն ալ թող նախանձին,

Յետոյ միասին սառ շամբանիա

Խըմենք, յետոյ պարենք, երգենք :

ԱՄԷՆ.— Հուրրա, հուրրա, թող ապրի շամբանիան,  
թող ապրի շամբանիան, վազենք մենք սեղան  
Հուրրա, հուրրա, թող ապրի շամբանիան  
թող ապրի շամբանիան, վազենք մեր սեղան,  
Հուրրա, հուրրա, թող ապրի շամբանիան,  
Պարենք, խրմենք, երգենք, խնդանք,  
Դաժան ցաւին եկէք մուր տանք,  
Ցատկենք, պարենք,  
Լաւ կեանք վարենք,  
Խնդանք  
Դանք, դանք:

Տ Ե Ս Ի Լ. Թ.

Ի յիսան— յեսոյ՝ Սիլվա

ԻՇԽ.— Աստուած գիտէ, հրաշալի են, թըռ-  
չուններու պոս կը պարեն. ա՛յս, երիտասարդու-  
թիւն, ես ալ ասոնց պէս յոգնիլ չէի գիտեր: Կը  
պարէի, կը պարէի, կը պարէի...

ՍԻԼ.— Իշխա՛ն, այդ ի՞նչ է:

ԻՇԽ.— Կոմսուհի, ձեզի տեսնելով իմ մէջս  
ալ պարելու փափաք մը ծնու, հրաշալի պարող էք:

ՍԻԼ.— Շատ կնամեծար էք:

ԻՇԽ.— Շատ ճշմարտախօս եմ. գիտէ՞ք, կոմ-  
սուհի, ես հեազհեաէ էտվինին իրաւունք տալ  
սկսայ:

ՍԻԼ.— Ի՞նչ բանի համար:

ԻՇԽ.— Եթէ իրա՛ւ Սիլվա վառէսքուն ձեզի  
կը նմանի, աղաս իրաւունք ունի՝ անոր սիրահար-  
ւած ըլլալով:

ՍԻԼ.— Եթէ երբէք այդ սէրը կրկին սկսի,  
և էտվին ուզէ ամուսնանալ անոր հետ, ի՞նչ  
կ'ըսէիք:

ԻՇԽ.— Օհ, կոմսուհի, դուք վէյլէրչայները  
չէք ճանչնար, իմ զաւակս լայդպիսի բան մը չի

կրնար ընել, անիկա բարձր դասուն կը պատկանի,  
և միայն ազնուական դասու աղջկան մը հետ  
կ'աճուսնանայ:

ՍԻԼ. — Ուրեմն Չարտաշի իշխանոհին պիտի  
մտնայ:

ԻՇԽ. — Արդէն մոռցած է անիկա հիմա Շթա-  
սինն հետ ա՛յնքան երջանիկ է՝ որքան դուք ձեր  
Պօնիին հետ:

ՍԻԼ. — Այո, ճիշտ է: Եկէք իշխան, միասին  
պարենք: (Կ'երթան):

Տ Ե Ս Ի Լ Ժ.

Պօնի-Շրասի

ՇԹ. — Ո՛րքան կրակոտ էք պարի մէջ: Յոգ-  
նեցայ:

ՊՕ. — Թերեւս դուք ալ կրակ ունիք, մարե-  
լու համար կրնամ ձեզի լեմօնի շաքար մեծարել:

ՇԹ. — Շնորհակալ եմ:

ՊՕ. — Օրիորդ, ներեցէք ինձի, ներեցէք՝ բայց  
զիտքած եղէք որ կեանքիս մէջ այս առաջին ան-  
գամն է որ սիրահարուած եմ. կը սիրեմ ձեզի:

ՇԹ. — Հապա ձեր կի՞նը:

ՊՕ. — Բո՛ւհ, ինչ կարեւորութիւն ունի, ան  
իմ կինս չէ որ...

ՇԹ. — Ի՞նչ ըսիք, դուք ամուսնացած չէ՞ք:

ՊՕ. — Ո՛չ... այո... բայց բան... վաղը  
կ'ըսեմ ձեզի:

ՇԹ. — Ինչո՞ւ վաղը և ո՛չ այսօր:

ՊՕ. — Իրա՛ւ, ինչո՞ւ այսօր և ո՛չ հիմա: Ըսե՞մ  
արդեօք... ինչո՞ւ չլսես, Պօնի: Տեսէք, օրիորդ,  
եթէ ես ազատ մէկը ըլլայի՝ ազատ այնպէս՝ ինչ-  
պէս... բաները... օրինակի համար... օդին մէջ  
թռչող թռչունները, ծովին ձուկերը... ինձի  
կրնայի՞ք սիրել:

ՇԹ.— Ատոր պատասխան չուենիմ :

ՊՕ.— Մի վախնաք, անկէ՞ կը վախնաք :

ՇԹ.— Ուրեմն դուք անիկա չէ՞ք սիրեր :

ՊՕ.— Կարեւորութիւն մի առաք, հոգիս, Աստուած վկայ, մէջը պարապ տակառ է :

ՇԹ.— Ինչո՞ւ միտտին կ'ապրիք բարեմն :

ՊՕ.— Ատոր պատասխանը վաղուընէ առաջ չեմ կրնար տալ :

ՇԹ.— Ախ, սա այրերը :

(Երգ — ջուէք)

ՇԹԱՍԻ.— Խօսեցուդ չեմ հաւատար,

Մի պրնդեր անդադար,

Ոչիս մեջ լաւ նայի,

Չեմ հաւատար :

Սիրելու չեմ հաւատար

Եւ մարդու սիրս չեմ տար,

Չեմ հաւատար ոչ ոքի,

Երդումի եւ խօսքի

Չեմ հաւատար :

Ինձ խաբել երբեք մի փորձեր,

Խօսեցուդ ես համոզուիլ չեմ գիտեր,

Չեմ համոզուիր

Եւ երբեք չեմ խաբուիր :

ՇԹ. ՊՕՆԻ.— Սերը պատրանք է,

Իրաւ փորձանք է,

Սիրող մարդիկ միայն

Իրժբախտ են անպայման :

(Կ'երբան)

Տ Ե Ս Ի Լ Ի .

Էտպին—Սիւլվա—յետոյ՝ Պօնի

ՍԻԼՎԱ.— Ջարմանալի ես էտպին, ինչո՞ւ երջանիկ պիտի չըլլամ, ամուսին ունիմ, կը սիրուիմ կամուսնի եմ :

ԷՏ. — Սաւա ես, երջանիկ շէս, Սիւվա, դուն  
ինձի կը սիրես :

ՍԻԼ. — Էտվին :

ԷՏ. — Այո, Սիւվա, ըսէ, կը սիրես, ինձի կը  
սիրես : (Կը համբուրէ) :

ՊՕՆ. — Օ՛ հէյ :

ԷՏ. — Կոմս :

ՊՕՆ. — Իշխան :

ԷՏ. — Ձեր հրամանը :

ՊՕՆ. — Հարկ չկայ, քիչ մը իրար հասկնանք :

ԷՏ. — Լաւ :

ՊՕՆ. — Ըսելիքդ ըսէ նայինք, մի՛ վախնար ըսէ :

ԷՏ. — Պօ՛ւի, դուն իմ հոգի՞ս ես թէ չէ :

ՊՕՆ. — Բանադողաւթի՛ն չէ՞ : . . .

ԷՏ. — Պօ՛ւի, Սիւվան կ'ուզեմ :

ՊՕՆ. — Ի՞նչ կ'ուզես :

ԷՏ. — Սիւվա :

ՊՕՆԻ. — Այսինքն բան . . . կնիկս :

ԷՏՎԻՆ. — Այո՛, ըսէ՛, շաւա :

ՊՕՆԻ. — Կեցիր, նորէն մի՛ թօթուեր, ուզածդ

ի՞նչ է :

ԷՏՎԻՆ. — Սիւվա՛ն :

ՊՕՆԻ. — Սիւվա՞ն . . . կեցիր քիչ մը մտածեմ . . .

Սիւվան . . . Սիւվան . . . ա՛ն, բարեկամս, առ բարով  
վայելես :

ՍԻԼՎԱ. — Պօ՛ւի :

ԷՏՎԻՆ. — Իրա՞ն, Պօ՛ւի :

ՊՕՆԻ. — Ա՛ն, սիրելիս, ա՛ն, մեզի պէս բարե-

կամներու մէջ տատանկ բաները ի՞նչ նշանակու-  
թիւն ունին :

ԷՏՎԻՆ. — Պօ՛ւի :

ՊՕՆԻ. - Քանի որ բարեկամս իմ կնիքովս  
երջանիկ կրնայ ըլլայ...

ԷՏՎԻՆ. - Ախ, Պօնի...

ՊՕՆԻ. - Կամազ, հիմա պիտի խաճնես ինձի:

ԷՏՎԻՆ. - Սիլվա՛:

ՊՕՆԻ. - Տիկի՛ն, մեր ամուսնութիւնը արդէն  
ամուսնութիւն չէր: Բարեկամները մեզի ասու-  
աւորի վրայ տեսնելու համար բան մքն էր. իր  
բացակայութեամբ փոյլոյ իմ ամուսնական ի-  
րաւունքս կը փոխանձեմ Էտվինին՝ եւ կը հետա-  
նամ: (Կ'երթայ):

ԷՏՎ. - Սիլվա՛:

ՍԻԼ. - Էտվինի՛ն:

ԷՏՎ. - Սիրտերն ամբողջ երբ կը սիրեն

կ'ըլլան կարեվէր,

Ամուսնութեամբ կը դարմանուին այդ վերքեր

Սիրտերն ամբողջ երբ կը սիրեն՝ կ'ըլլան

կարեվէր,

Ամուսնութեամբ կը դարմանուին այդ

վերքեր,

ՍԻԼ.

ԷՏՎ.

Էտվին, էտվին, ահա դարձեալ միացանք,

Ամիսներով թէեւ հեռու ապրեցանք,

Սիլվա, քեզի շատ կը սիրեմ, հաւատա՛

ասոր,

Սիլվա, անչափ երջանիկ եմ ես այսօր:

ՍԻԼՎ. - Սիրտերն ամբողջ երբ կը սիրեն կ'ըլլան

կարեվէր:

Ամուսնութեամբ կը դարմանուին այդ

վերքեր,

իՏՎ. Սիրտերն ամբողջ երբ կը սիրեն կ'ըլլան  
 կարեվէր.  
 ՍԻՎ. Ամուսնութեամբ կը դարձանուին այդ  
 վէրքեր  
 Սիլվա, Սիլվա, անա դարձեալ միացանք:  
 ՇԹԱՍԻ.— Էտվիւ, պարելու համար պէտք է  
 ես ուրիշք փնտռեմ: Ներեցէք, կոմսուհի (կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Զ.

Սիլվա, ծառայ, ամէնքը

ՍԻԼ. — Վերաբերուս բերէ՛ք:

ԻՇԽ.— Ինչպէ՛ս, կոմսուհի, կ'ուզէք մեկնիլ:

ՍԻԼ.— Այո՛, ի՛նչան, ներեցէք:

ԻՇԽ.— Գ'աղաչեմ, մի՛ նրթաք, մանկութենէ  
 ի վեր իրարու սիրահարուած երկու սիրտեր ու-  
 նինք. անոնց ամուսնութիւնը պիտի յայտարար-  
 րեմ. կ'աղաչեմ, մի՛ մեկնիք և այդ հանգէսը ձեր  
 ներկայութեամբ պատուեցէք:

ՍԻԼ. — Լա՛ւ, չեմ մեկնիր:

ԵՄԷՆՔԸ.— Պապո՛, պապո՛:

ԻՇԽ.— Երջանիկ եմ որ այս առիթը կը ներ-  
 կայանայ: Եկէք, զաւակներս Շթասի, Էտվին,  
 Եկէք, ձեզի կուտամ իրարու: Երջանիկ ըլլաք:

ԻՏՎ. Ինձ ներեցէք դուք բարեկամներ,

Սա նախատազրի կամքն էր,

Սիրտս ուրիշին կը պատկանի,

Ես սիրտ չունիմ սէկ քանի:

Հանդարտ կ'ապրէինք անուշ օրեր,

Մարտը սէր մը մեզ կ'օրօրէր,

Ես ինչպէ՛ս մոռնամ, շատ եմ սիրեր,

Չեմ ունեցեր այդպէս սէր:

Ինձ ներեցէք, ես խոստացեր եմ անոր՝

Պատիւ եւ կեանք, անուն ազնիւ իմ բոլոր:

**ՔՕՐՕ.**— Քու սիրուհիդ արդեօք ո՞վ է, իշխան, խօսէ  
Շատ հեռո՞ւն է, շատ սիրո՞ւն է, արդեօք հո՞ս է

**ՍԼ.**— Ամիսներով թէեւ հեռու ապրեցանք,  
էտվին, քեզի շատ կը սիրեմ, հաւտա անոր.

էտվին անչափ երջանիկ եմ ես այսօր:

**ԻՇԽ.**— Եւ այդ միւս կի՞նը ո՞վ է:

**ՍԻԼ.**— Ես եմ:

**ԱՄԷՆ, ՔԸ.**— Կոմսուի Քանցիանու!

**ՍԻԼ.**— Ո՛հ, ես կոմսուի Քանցիանու չեմ, ես  
իշխանուհի Վէլլէրշայմն եմ. էտվի ինձ ամուսինը:

**ԻՇԽ.**— Իշխանուհի Վէլլէրշայմն:

**ՍԻԼՎ.**— Այո՛, կարդացէք:

**ԻՇԽ.**— «Ես էտվին Ռո՞ւայա Քառլ Մարթա իշ-  
խան Լիբերթ Վէլլէրշայմն Օր. Սիլվա Վարէսքունի  
հետ պիտի ամուսնանամ. լեթը շարաթէ՞ն: Ներ-  
կաներէն կր խնդրեմ որ վկայ ըլլան.»

Բայց անհարելի է. դուք Սիլվա Վարէսքունի,  
Չարտաչի իշխանուհի՞ն!

**ՍԻԼ.**— Այո՛, ես Չարտաչի իշխանուհին եմ,  
եւ եթէ ուզեմ՝ այս գիշեր ութը ամիսը կը վեր-  
ջանայ:

**ԻՇԽ.**— Բայց! բայց!

( Ե Ր Գ )

**ՊՕՆԻ.**— Սէրը պատրանք է, իրաւ փորձանք  
է: Անտաշ մարդիկ միայն դժբաղդ են անպատման:

**ՔՕՐՕՆ.**— Սէրը պատրանք է

Իրաւ փորձանք է:

Սիրող մարդիկ միայն

Դժբախտ են անպայման:

## Գ. ԱՐԱՐ

Պանդոկի մը մէջ — սալօն

ՏԵՍԻԼ Ա.

Պօնի — Սիլվա

ՊՕՆԻ.— Է՛, ալ հանգիստ ես կը կարծեմ:

ՍԻԼՎ.— Հարկաւ:

ՊՕՆԻ.— Աղէ՛կ խաղ խաղացիր ինձի, ճարտարութեանդ հիացած եմ:

ՍԻԼՎ.— Ասոնք աննշան բաներ են:

ՊՕՆԻ.— Աննշան բաներ, վա՛յ սատանայ, ըսել է ասոնք աննշան բաներ են հա՞, արդեօք ասոնց նշանաւորը ո՞րն է. Աստուած կեանք տայ, Պապօ՛, շնորհաւորելի է:

ՍԻԼՎ.— Կը յանդիմանե՞ս ինձի, Պօնիս:

ՊՕՆԻ.— Ո՛չ Սիլվաս, բայց բան, գիտե՞ս ի՞նչ բերնէս փախաւ, միայն ըսել ուզեցի որ...

ՍԻԼՎ.— Յետո՞յ:

ՊՕՆԻ.— Էտվինին կացութիւնը շատ գէշ է. Թղան քեզի համար պիտի մեռնի:

ՍԻԼՎ.— Կը զարմանամ խելքիդ, եթէ չէ մօտեցած՝ շուտով կը մոռնայ:

ՊՕՆԻ.— Կ'երդնու՞մ որ եթէ Էտվին քեզի հետ չամուսնանայ՝ կը մեռնի:

ՍԻԼՎ.— Իրա՞ւ:

ՊՕՆԻ.— Բայց մի՛ լար... հիմա ես ալ պիտի լամ... մանաւանդ երբ կնոջ մը լալը տեսնամ՝ ես չեմ դիմանար:

ՏԵՍԻԼ Բ.

Անոնք, Ֆէրի

Ֆէրի.— Օ՛, Պօնի, Սիլվա, ուրկէ՞ ուր...  
այս ի՞նչ անակնկալ է... բաց... այդ ի՞նչ է...  
Սիլվա, կուլա՞ս... Պօնի՛, դո՞ւն ալ, ի՞նչ կայ:

Սիլվա.— Կ'աղաչեմ թող ինձի:

Ֆէրի.— Բաց ինքզինքիդ եկուր, Սիլվա,  
ես խնդիրը կռահեցի, բայց ասոր համար չեն լար,  
ընդհակառակը պէտք է զո՛հ ըլլալ. դուն դարձ-  
եալ Պաշտարէշի դարձիր, մտածէ, Պաշտարէշի  
պիտի երթաս, հարիւրաւոր հիացողներդ պիտի  
չըջապատեն քեզի, հազարաւոր ձեռքեր պիտի ծա-  
փահարեն:

Սիլվա.— Ո՛չ, ո՛չ, Ֆէրի, ես ա՛լ բեմ չեմ  
ելլեր:

Ֆէրի.— Ենչո՞ւ:

Սիլվա.— Պիտի ամուսնանամ և այդ ազատ  
կեանքին վերջ պիտի տամ:

Ֆէրի.— Ամուսնանա՞լ. լաւ, որի՞ հետ:

Պօնի.— Էտվինին հետ:

Սիլվա.— Ո՛չ, անո՛ր հետ:

Ֆէրի.— Ի՞նչ բո՛ր, Պօնիի՞ն հետ, աղա՞յ, ե-  
զոր ի՞նչ է, այդ միտքէն հրաժարէ, Սիլվա, ե-  
կուր դուն նորէն Չարտաչի իշխանուհին եղիր:

Պօնի.— Պուսվօ՛, Ֆէրի: Ես դուրս պիտի  
ելլամ քիչ մը, դուն ստ տղուն խրատական դաս  
մը տուր:

(Կ'երթայ):

ՏԵՍԻԼ Գ.

Ֆէրի, Սիլվա

Ֆէրի.— Սիլվա՛, աղուոր աղջի՛կ, ար-  
ցունքներդ չորցուր և այդ սիրուն աչուկներովդ  
ձերուկ բարեկամիդ երեսը նայէ. նայէ և անոր  
խօսքերը լաւ մտիկ ըլլէ: Ինչո՞ւ պիտի ամուսնա-

նաս, դուն ազատ թոշուն մըն ես և ուղած ճիւղիդ վրայ կրնաս թափիլ, նեղ վանդակի մը մէջ դուն ի՞նչպէս պիտի կրնաս ապրիլ: Գիտեմ, սիրտորդ արիւնեցաւ քիչ մը, սէրը վերաւորեց յոյսերց, բայց դուն ապակա ինչ տա երիտասարդ ես, թափմ ես, մանաւանդ գեղեցիկ ես, այն բուսակն՝ որ դուն դարձեալ պիտի հագնիս քու կարծ քրդանցքներով զգեստներդ՝ պիտի ունենաս հարիւրաւոր գերիներ, որոնց մէջ դուն պիտի գտնես գեղեցիկներ, երիտասարդներ, հարուստներ: Մի՞թէ այս ամէնը քու վերաւոր հագիդ չեն կրնար սկոփել: շատ շուտով կը մոռնաս վիշտերդ, Սիւվա: Տէ՛, գաւազս, խելացի եղիբ, ինքզինքիդ եկուր: Պուտարէշթր առանց Սիւվայի մնաց, անկա գրկուեցաւ իր Չարատչի իշխանուհիէն, այնտեղ բոլորը քեզի կը սպասեն, հոն վազէ: Սիւվա: Պիտի երթա՞ս, չէ՞, Սիւվա: ձերուկ բարեկամիդ առաջարկը պիտի չմերժես, այնպէս չէ՞:

Սիւվա.— Ա՛յս, Ֆէրքօ, չըլլար:

Ֆէրք.— Այգպէ՞ս... Պօնի, հո՞ս եկուր: Կառսոն, շամբանիա և երեք գուտթ, կեցիր: Ընէ՛ որ նուագին, բայց ես կ'ուզեմ այնպիսի եղանակ մը որ յուսահատ սիրտերուն յոյս և սփոփանք ներշնչէ, որ գեղեցիկ անցեալը յիշեցնէ, այո՛, այնպիսի եղանակ մը, որուն մէջ հաճոյքը դոռայ՝ երբ սէրը հեծեծէ: Գնա՛: Այո՛, ես ահա՛ այնպիսի եղանակ մը կ'ուզեմ: Պօնին ո՞ւր մնաց: Պօնի՛, Պօնի՛, շուտ եկուր:

ՏԵՍԻԼ Դ.

ԱՆՈՆԸ ԵՆ ՊՕՆԻ

ՊՕՆԻ.— Ի՞նչ կայ, իրարանցու՞մք ի՞նչ է՛:

Ֆէրք.— Բան մը չկայ, մենք շամբանիա պիտի խմենք, այնպէս չէ՞, Սիւվա:

ՍԻԼՎ.— Այո՛ :

ՊՕՆԻ.— Լաւ ես մտածեր :

ՖԷՐԻ.— Մենք թպրտի վերականգնենք զը-  
լարթ ու շէնչող անցեալը :

ՊՕՆԻ.— Հրաշալի է :

(Երգ)

ՊՕՆԻ ԵՒ ՖԷՐԻ.— Նորէն եկանք իրարու հով,  
Շաս ապրի Սիլվան,  
Պէտք է անցնի կեանքը երգով,  
Շաս ապրի Սիլվան,  
Վիտը իսպառ անհետի,  
Թող կեանքը մեզի ժրպօի :  
Հին օրերուն պէս դարձեալ երգենք պիտի  
Հէ՛յ, իրաւ կեանքը մի երազ է ունայն,  
Հէ՛յ, իրաւ կուգայ կ'անցնի ամէն բան.  
Կեանքը երազ է, չի տեսնուի օտար երկար,  
Պիտի երթաս՝ ինչպէս եկար :

ՍԻԼՎ.— Մենք բաւական ցաւ ունեցանք

Թող կորչի սանջանք,

Հիմա մոռնանք այ հեծեծանք,

Թող կորչի սանջանք,

Կորաւ իսպառ մեր սիրտէն,

Յիմար հոգիները արդէն :

Մարդու կեանքը աւելի կարճ է վարդէն :

Հէ՛յ, իրաւ կեանքը մի երազ է ունայն,

Հէ՛յ, իրաւ կուգայ կ'անցնի ամէն բան,

Կեանքը երազ է, չի տեսնուի օտար երկար,

Պիտի երթաս՝ ինչպէս եկար :

ԱՄԷՆՔԸ.— Հէ՛յ, իրաւ կեանքը մի երազ  
է ունայն, եւլն. եւլն.

(Պար. կ'երթան)

ՏԵՍԻԼ Ե.

Կառսօն, Էտվին, յետոյ՝ Պօնի

ԿԱՌՍ.— Հաճեցէք քիչ մը հանգիստ առնել, ես հիմա կ'իմացնեմ Պարոն կրմօին:

ՊՕՆԻ (Մտնելով).— Վայ, Էտվին, իրաւ որ նախազգացում ունեցայ, որ պիտի դաս:

ԷՏՎ.— Սիւլփան ո՞ւր է:

ՊՕՆԻ.— Սիւլփան, բան, Սիւլփան ըսիր, այնպէս չէ՞, սալօն է:

ԷՏՎԻՆ.— Ո՞ր սալօնը:

ՊՕՆԻ.— Գօնսէրին սալօնը:

ԷՏՎ. (Նայելով).— Օ՛, Յէրին ալ հոն է, ինչո՞ւ եկեր է:

ՊՕՆԻ.— Չեմ դիտեր, մենք ալ շատ զարմացանք:

ԷՏՎ.— Շուտ կուգա՞յ, ի՞նչ որ է, հոս կը սպասեմ: Պօնի, ես քեզի բարեկամ կը կարծէի. բրածիդ հաւնեցա՞ք, գիտէիր որ ես Սիւլփան կը կը սիրեմ, ինչո՞ւ այս խաղը բրիր. ինձի ապուշի տեղ դրիր, ըսէ՛, ինչո՞ւ Սիւլփան կնիկս է, ըսիր:

ՊՕՆԻ (Սուկալով).— Ես առանկ բան չըսի:

ԷՏՎ.— Քեզի եմ... այս ի՞նչ է. հիմազ ալ սուտ քո՞ւն, ի՞նչ կարծեցիր ինձի, հէ՞:

ՊՕՆԻ.— Ա՛յ, օգնութի՞ւն, օգնութի՞ւն:

ԷՏՎ.— Ինչո՞ւ մեր տունը բերիր:

ՊՕՆԻ.— Կեցիր, աղայ մ'ըլլաք, ի՞նչ ես կուրորիս փակեր, կամաց կարցուր որ պտտասխանեմ:

ԷՏՎ.— Լաւ, ըսէ՛:

ՊՕՆԻ.— Ես Սիւլփային համար կնիկս է չըսի:

ԷՏՎ.— Դուն շոշորդ ես:

ՊՕՆԻ.— Շոշորդ, շոշորդ ըսիր ինձի, չէ՛, ալ

այս անարգանքին չեմ կրնար հանդուրժել, ամէն մարդ ալ քիչ շատ արժանապատուութիւն ունի. Սիլվան չկրցար համազել, հետը չկրցար ամուսնանալ՝ բարկութենէդ եկեր ինծի կը դարնուիս կոր, ասիկա իբր թէ բաւական չէ եղեր, հիմա ալ Սիլվան նոր երգ ըր սկսեր է երգել. «Դուն իմ էրիկս պիտի ըլլաս». ալ ձանձրացայ, զգուեցայ քենէ ալ, Սիլվայէն ալ, իմ ցաւս մտոցեր եմ՝ ձեր ցաւին հետ կ'իյնամ կ'ելլամ կոր. ալ կը բուէ, բաւական է, կը հասկնաս»:

ԷՏՎ.— Օճիքս ձգէ՛ :

ՊՕՆԻ.— Չեմ ձգեր, քիչ մըն ալ ես քեզի պիտի թօթուեմ, իմ խեղճ օճիքներս քու ձեռքերուդ մէջ մաշեցան, կը հասկնաս կ'ըր. քու ձեռքերուդ մէջ:

ԷՏՎԻՆ.— Չգէ՛ ըսի :

ՊՕՆԻ.— Չէ՛, առաջ դո՛ւն իմ օճիքս ձգէ :

ԿԱՌՍ.— Պարոն ըր կ'ուզէ ձեզի հետ անսնուիլ :

ՊՕՆԻ.— Էտվի՛ն, էա՛յրդ :

ԷՏՎԻՆ.— Ինծի չտեսնա՛յ, (Կ'երթայ) :

ՏԵՍԻԼ Զ.

ՊՕՆԻ — Իշխան

ԻՇԽ.— Պօ՛նի՛, Պօ՛նի՛, Էտվի՛նը հո՞ս է :

ՊՕՆԻ.— Այո՛, Իշխան, հո՛ս է :

ԻՇԽ.— Ո՞ր է, ո՞ր է :

ՊՕՇԻ.— Հոն է... բան... հոս է, վերն է, վարն է, ասդին անդին :

ԻՇԽ.— Հիւանդ չէ, չնպէս չէ՞ :

ՊՕՆԻ.— Բան չունի, երկաթի՛ պէս է :

ԻՇԽ.— Փա՛ռք Աստուծոյ, թէլէֆօնը ո՞ւր է :

ՊՕՆԻ.— Հո՛ն :

ԻՇԽ.— Շնորհակալ եմ, Պօնի: 142—22:

ՊՕՆԻ. (քեւնոցին վրայ գրելով) 142—22 պէտքը

կ'ըսայ:

ԻՇԽ.— Ալլօ'... 142—22... այո', 142—22:

ՊՕՆԻ.— Իշխան:

ԻՇԽ.— Ի՞նչ կ'ընես Պօնի:

ՊՕՆԻ.— Վերարկունիդ կարճ է:

ԻՇԽ.— Ո՛չ, Պօնի, վերարկուս կարճ չէ, ֆրաքս երկար է, Համմէ՞, Ի՞նչ, Ի՞նչ վերարկու, Ի՞նչ ֆրաք... համմ, ... Ի՞նչ կ'ըսէք, օրիորդ, ո՞վ բաւ որ վերարկուս կ'արժէ հազար ֆրանք... Ե՛ս... ստանկ բան չբոխ, օրիորդ, ես 142—22 ոսկի... Տէր ողորմեա՛, վերարկուս 142 կամ 22 ֆրանք... օրիորդ, վերարկուսի խնդիր չկայ, ես ձեզի 142—22 թիւ բացէք բոխ... ո՞վ բաւ, ես ձեզի տաւնք բան չբոխ, վերարկուսի համար Պօնիֆոսին բոխ... համմէ՞, ձեզի չցուցուցած Պօնիֆոսին ինչո՞ւ տալի... Տէր Աստուած, այս վերարկուսին խօսքը ուրկէ՞ ելաւ... օրիորդ, լաւ մտիկ րէք, ատոր մասին ետքը կը խօսինք, հիմա ինչի թիւ 142—22ը բացէք, այո', 142—22... Փա՛ռք Աստուծոյ, ալլօ, դո՞ւն ես Անհիթա... ես եմ, էլիկդ... անհոգ եղիր հոս է... շատ աղէկ է եղեր, երկաթի պէս... այո, հիմա տուն կը բերեմ: Պօնի, տեսա՞ր Ի՞նչ ըրիր, պատճառ եղար որ էտվինին և Շթաօիին հարսնիքը յետաձգուի. ա՛հ Պօնի ա՛հ:

ՊՕՆԻ.— Իրաւունք ունիք իշխան, բայց հարսնիքը այսօր իսկ կրնանք ընել, ես պատրաստ եմ, շատ դժուար խնդիր մը չէ:

ԻՇԽ.— Ինչե՛ր կ'ընես, Պօնի:

ՊՕՆԻ.— Վայրկ'ան մը, ձեր թոյլատուութեամբ, Աստուծոյ հրամանով կոմսուհի Շթաօիին ձեռքը կը խնդրեմ:

ԻՇԽ. — Պօնի, ցնդեցա՞ր, Շթասի էտվինը  
կը սիրէ, չի համաձայնիր:

ՊՕՆԻ. — Այնպէ՞ս կը կարծէք, վայրկեան մը,  
142—22:

ԻՇԽ. — Ի՞նչ կ'ընես:

ՊՕՆԻ. — Այլօ՛, ես եմ՝ կոմս Պօնի Բանցրա-  
նու, համեցէք կոմսուհի Շթասին թէլէֆօնին հը-  
րաւիրելու... Կոմսուհի, դո՞ւք էք... Նախ՝  
յարգանքներս, ինչպէ՞ս էք, լա՞ւ էք. ինծի նե-  
ղացած էք, այո, իշխանք հոս է: Ձեզի բան մը  
պիտի բսեմ բայց չնեղանաք, ձեզի պաշտօնապէս  
իշխանէն խնդրեցի... ամուսնանալու համար...  
ոչ, ոչ, իմ հաշւոյս... պատուական անձիս հա-  
մար... ձեզի, այո՛, ձեզի... այո, ես... ձեր վճա-  
կան պատասխանին կը սպասեմ. ամիս մը յետոյ,  
կարելի բան չէ: Հիմա, հիմա, անմիջապէս, հա...  
կիթը տեղը հասած է... կ'աղաչեմ, կը պաղատիմ,  
կ'աղերսեմ... ա՛խ, օրիորդ, մի գոցեր. չլմնցու-  
ցինք... ա՛խ. Շթասիս, կ'աղաչեմ և կը սպասեմ  
ձեր համամտութեան... պատասխանեցէք և ինծի  
երջանիկ ըրէք... օ՛հ, շնորհակալ եմ... տուէք  
ձեռքերնիդ համբուրեմ... այո՛, ցտեսութիւն: Լսե-  
ցի՞ք, անեղ-հայր:

ԻՇԽ. — Ի՞նչպէս թէ աներ հայր:

ՊՕՆԻ. — Հարկաւ, չէ՞ որ Շթասին պատաս-  
խանը իմացանք է բան մը ըսե՞մ ձեզի. ալ եսով,  
դուով խօսինք:

ԻՇԽ. — Տէր ողորմեա, միտքէ չանցած բաներ  
պատահեցան. է՛հ, ի՞նչ ընենք, քանի որ Շթասին  
ալ համամիտ եղաւ, եկուք քեզի համբուրեմ:

ՏԵՍԻԼ է.

Անոնք, Ֆէրի, ծառայ

Ֆէրի. — Ի՞նչ կ'ընես հոս, Պօնի, չես պատ-  
րաստուեր տակաւին. Սիլվան արդէն պատրաստ  
է: Պիտի երթանք, շարժէ քիչ մը. ի՞նչ կ'եցեր ես:

ՊՕՆԻ.— Նախ պատիւ ունիմ ձեզի յայտա-  
բարելու որ, ես, այսինքն՝ Պօլիս, աչ Սիլվա ա-  
նունով կին կը ճանչնամ և ոչ ալ Պուտարէշթ  
կ'երթամ. ուրիշ կնոջ հետ ալ յարարերութիւն  
չունիմ. հասկցա՞ք երգչուհիներու աւխտեալ պաշտ-  
պան մեծարոյ Ֆէրի Քէրէքէշ :

Ֆէրի.— Իրաւ որ շատ զուարճալի ես, Պօնի :

ԿԱՌՍ.— Պարոն կոմս, ձեզի երկու կին կը  
սպասեն :

ՊՕՆԻ.— Երկու կին, տեսա՞ք, աներ հայր,  
բաւոր խառնակ գործերը իմ գլխուս կը փաթթեն :  
(Կ'երթայ)

### ՏԵՍԻԼ Է.

Ֆէրի, Իշխան, Իշխանուհի

Ֆէրի.— Ներեցէք պարոն, Իշխան Վայլեր-  
շայիին հետ տեսնուելու պատիւը ունիմ :

ԻՇԽ.— Այո՛, պարոն, այո՛ :

Ֆէրի.— Ես ալ Ֆէրի, Ֆէրի Քէրէքէշ, հա-  
ստուաւ, շանթաններու սիրահար, երգչուհիներու  
պաշտպան՝ Ֆէրի Քէրէքէշ. ձեր զաւակին հովիւնին  
ամէնէն հին եւ ամէնէն լաւ մէկ բարեկամը :

ԻՇԽԱՆ.— Ես Լիբերա Վայլերշայմ, Իշխան  
Լեօբուս Մարիա :

Ֆէրի.— Ներեցէք որ ձեր բնատնեկան խըն-  
դիրներուն պիտի միջամտեմ, բայց բայց ես հո-  
վինք շատ կը սիրեմ :

ԻՇԽԱՆ.— Կ'որեւայ ամէն բան գիտէք. ու-  
րեմն լաւ է, այս խնդրի մասին ձեր կարծիքը  
ի՞նչ է :

Ֆէրի.— Մեծ կարծիք մը չունիմ, յարգելի  
Իշխան. ես միայն իմ փորձառութեանս կը վստա-  
հիմ և ձեզի սաչափը կ'ըսեմ որ հօր մը միակ  
պարտականութիւնը իր զաւակը անոր սիրած  
աղջկան հետ ամուսնացնել է :

ԻՇԽԱՆ. — Համամիտ կ'ըլլամ ձեզի, բայց այդ պարտականութիւնը ինչպէ՞ս կատարել կարելի է հովի ին դէմ. անոր սիրածը շանթանի հասարակ երգչուհի մըն է :

Ֆէրի. — Թոյլաարեցէք ձեզի փոքր պատմութիւն մը ընեմ. պատմութիւն չէ, իրականութիւն մը: Ես ազնուական ընտանիքի կը պատկանիմ: Երիտասարդութեանս ատեն Եէնասատայի մէջ կայիս Անհիթա անուանով երգչուհի մը սիրեցի, և մինչեւ հիմա չեմ կրցած մոռնալ: Այսօր 70 տարեկան եմ, Անհիթային հետ գիշեր մը եւս անցընելու համար ամբողջ կենքս կուտամ:

ԻՇԽ. — Այդ Եէնասատա բռուած տեղը ո՞ւր է :

Ֆէրի. — Նեսալաքէնի շրջակայքը. այն ատենուան բոլոր երիտասարդութիւնը այս գեղեցիկ երգչուհիին շուրջը կը դառնար. բայց վերջսպէս քաղաքին կառավարիչը՝ կէզան՝ ամուսնացաւ Անհիթային հետ: Սակայն կարճ ժամանակ մը յետոյ Անհիթան այրի մեաց:

ԻՇԽ. — Անհիթա, Անհիթա... այրի՞ մեաց... կառավարիչ կէզայէն... վստահ էք ձեր ըսածներուն:

Ֆէրի. — Ներեցէք որ հասկննեմ, սա անոր լուսանկարն է, տեսէք: Մինչեւ հիմա գրպանս կը պահեմ այդ նկարը, ա՛խ, Անհիթա, ամբողջ կենքս կը զոհէի՝ եթէ կարենայի քեզի հետ գիշեր մը եւս անցնել:

ԻՇԽ. — Կինս... կինս...

Ֆէրի. — Ի՞նչ եղանք, իշխան, արգիօք դո՞ւք ալ ծանօթ էիք:

ԻՇԽ. — Այո՛, քիչ մը... Աստուած իմ:

ԱՆՀ. (Մտնելով). — Սիրելիս Լէօթուա Մարիա, ո՞ւր է հովիւնը:

ԻՇԽ. — Հա՛, դո՞ւն ես, եկա՛ւր, եկու՛ր որ տեսնուի՛նք:

Անչ.— Ի՞նչ կայ, բան մը պատահեցաւ էտ-  
վինին... աս', Ֆէրքօն:

Ֆէրի.— Անհիլթան. ներեցէք որ ինքզինքս  
ներկայացնեմ ձեզի. ես, Ֆէրի Քերէքէշ Եէնսաաթ,  
շանթաններու սիրահար և երգչուհիներու պաշա-  
պան: Ձեր թոյլատուութեամբ (մեկուսի) հապը կր-  
լեր է: (Կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Թ.

Իսխան—Անհիլթա

Անչիլթ.— Լէօթօլտ Մարիա, ինչո՞ւ այդպէս  
արձանի պէս նստեր ես: Վարը ինչեր կ'անցնին  
կը դռնան, գիտե՞ս. մեր Շթասին Պօնիին հետ...

ԻՇԽ.— Հիմա ատոր կարգը չէ. դուն ինձի  
պատասխան աուր նայիմ: Ո՞ւր է Եէնսաաաան, ս՞՞վ  
է կէզան, և ի՞նչ է երգչուհին: Ինչո՞ւ. չէք պա-  
տասխաներ. ըսել է ճիշտ է, դուն երգչուհի մըն  
էիր... խեղճ էտվին... ժառանգական ախար մը  
զօնն է. խե՛ղճ էտվին:

Անչիլթ.— Բայց Լէօթօլտ Մարիա...:

ԻՇԽ.— Լսեցէ՛ք. ըսել է իշխան վէյլէրյայմը  
իբրեւ կին՝ երգչուհի մը ազրեցուցեր է. իսկ հիմա  
երկրորդ երգչուհի մը եւս, ի՞նչ կը յուսայի. ի՞նչ  
եղաւ:

Անչիլթ.— Լէօթօլտ...:

ԻՇԽ.— Լսեցէ՛ք, և դուրս ելէք: (Կ'երբան):

ՏԵՍԻԼ Ժ.

Պօնի Սիլվա Էսվին Շքասի

ՊՕՆԻ.— Սիլվան ետեւէս կուգայ կօր. ամէնքը  
ինձի մէյ մէկ խօսող ըրին, խօղ մըն այ ես անոնց  
ընեմ: Ան է կարծեմ: Ալլօ, ալլօ, դո՞ւն ես էա-  
վին... Ես եմ, Պօնի... ձայնդ ինչո՞ւ կը դողայ  
կօր... ատ ի՞նչ է, երեսիդ գոյնը ճերմակ հաւկիթ  
է դարձեր... ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ... աս', է՛վին,  
ի՞նչ կ'ընեա, խենդութիւն չուզեր, ձայնդ խեղ-  
զուեր է կարծես. ոտքդ պազնեմ սա ատրձանաղը:

ձեռքէդ ձգէ, Սիւլվան առանց քեզի չկրնար ապ-  
րիլ, ասորճանակը ձեռքէդ ձգէ՛ ըսի. բայց կ'աղա-  
չեմ՝ էտվին, երիտասարգ հասակի մէջ գոհուիլ...  
հոգիդ սրեա վայրկեան մը կեցիր:

Սիւլվ. — Ձգէ՛ ես խօսիմ:

ՊՕՆԻ. — Աստուածդ սիրես ձգէ՛ Սիւլվա, ըն-  
կեր մը պիտի կորսնցնեմ, կատակի տակն չէ:  
Ըսէ՛, էտվինս, ես քու հոգի՛դ եմ թէ չեմ: Մի՛  
բարկան-ր, սիրելիս, մի բարկանար, ասորճանակը  
իմ կողմս մի՛ բռնեք. ո՞վ, Սիւլվան, այո՛, հօս է...  
քենէ կը խնդրէ կօր որ... Ի՞նչ պիտի ըսես...  
Սիւլվան կ'ըսէ որ...

Սիւլվ. — Ըսէ որ խենդի պէս կը սիրեմ զինքը:

ՊՕՆԻ. — Ըսեմ:

ԷՏՎ. — (մտնելով ներս) Սիւլվա՛:

Սիւլվ. — էտվի՛ն:

ՊՕՆԻ. — էտվինը խենդի պէս կը սիրեմ, կ'ը-  
սէ կոր, եթէ ան մեռնի ես ալ կը մեռնիմ ըսաւ,  
մի՛ քաշեր ասորճանակը մի՛ քաշեր. գո՛նէ վերջին  
խօսքդ բռէ:

ԷՏՎ. — կը սիրեմ Սիւլվան:

ՊՕՆԻ. — Հէ՛, յուսահոգի էտվինը հօս է եղեր:  
Երթամ Շթասին կանչեմ. Ա՛հ, սքսթ. եթէ տես-  
նամ որ էտվին Սիւլվային հեա է՛ կը խոտանամ  
քեզի հեա ամուսնանալ, ըսիր, նայէ՛, կը պագ-  
աւորն կոր:

ՇԹԱՍԻ. — Հի՛մա հաւատացի այլեւս:

ՊՕՆԻ. — Մ՞նք ալ պագաւորնք:

ԷՏՎ. — Պօ՛րի:

ՊՕՆԻ. — Ի՞նչ է. մենք ձեզի բան մը բաժ-  
ուելի՞նք: Իշխան և իշխանուհի Շարլ Մարիա Վայ-  
լէրչայմ Բօնալտ էտվին, պատիւ ունիմ ձեզի ներ-  
կայացնելու նշանածս՝ կամսուհի Շթասին:

Սիւլվ., ԷՏՎ. — կը շնորհաւորենք:

ՇԹԱՍԻ, ՊՕՆԻ. — Շնորհակալ ենք:

ՊՕՆԻ. — Երկու հարս՛իքք մէկ պիտի ընենք:

Վ Ե Ր Զ

ԳԻՆ 30 ՂՐՈՒՇ  
ԱՄԵՐԻԿԱ 30 ՍԷՆՅԹ

891.992  
DN



avec M<sup>le</sup> MILOVITSCH dans le rôle de SUZANNE  
 PROCHAINEMENT LA CHASTE SUZANNE

فرانسز نیاروسنره قوردی میلوویچ اوبرت قومبانیاسی طرفندره  
 بو اوقسام ﴿ چارداس ﴾ اوبرت ۳ برده اجرا ایدیله جکدر

Téléphone  
 P. 1819

**THÉÂTRE FRANÇAIS**

Rideau  
 à 9 h. 30

Direction : J. LEHMANN

Troupe d'Opérettes Viennoise  
**CORDY MILOWITSCH**

Direction : Maximilian SLADEK

Régisseur : Edi Winterfeld      Chef d'orch. Egon Overmann

SAMEDI 1<sup>er</sup> MARS A 9 H. 30

# CZARDASFUERSTIN

Opérette en 3 actes de GILBERT

**DISTRIBUTION**

Léopold Maria, duc de Lieppert	Otto Weber
Anhilde, sa femme	Erika Nymgau
Edwin Ronald, leur fils	Walter Herrling
Comtesse Stasi, nièce du duc	Mizzi Will
Comte Boni Kanessianu	Fritz Steiner
Sylva Varescu	Cordy Milowitsch
Feri v. Keyekes, surnommé Feri baci	Gustl Beer
Eugène v. Rohnsdorf.	Josef Möser
Kiss, notaire	Fred Lieske

Le premier acte se passe à Budapest, à l'Orphéum  
 Le deuxième dans une grande capitale, chez le duc de Lieppert  
 Le troisieme acte, dans un hôtel de la même ville  
 Epoque contemporaine.

Imp. MINASSE, Cité d'Alep, Péra

BIENTOT FERRASSQUITA


A partir du Mercredi 18 Mars  
**LA TROUPE ITALIENNE**  
 de  
**GRAND OPERA**

du chev. PODESTA  
 actuellement à NAPLES



# Չ Ա Ր Տ Ա Ճ

ՕՐԷՐԷԹ 3 ԱՐԱՐ



ԽՕՍԲ՝

ԼԷՕ ՇԹԱՅՆ ԵՒ ԵԷՆՊԱՀ ՊԵԼԼԱ

ԵՂԱՆԱԿ՝

ԷՄՄԷՐԻԽ ԲԱԼՄԱՆ

Թարգմանիչ եւ Րեժիսէօր

Ա Շ Ո Տ Մ Ա Տ Ա Թ Ե Ա Ն Ց

Ա. անգամ ներկայացուած է 1923 Ս. Զատիկի Բ.

օրը, Բերա, Բըթի Շանի Թատրոնը:



Հրատարակութիւն ԿԱՎՈՒՅԵՐ

Տպագրութիւն

Մ. Տ Է Ր Ս Ա Հ Ա Կ Ս Ա Ն

Կ. ՊՈԼԻՍ.

